

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

### ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԱՐԿՈՒՌԵԱՆ ԴԱՏԻՆ

Ս. Արոտոյ Կալուսածոց Տեսուչ Գերապոսիս Տ. Մասրիս Ս. Եպիսկոպոս Գայրզնեանի յԱսենի Տնօրէն Ժողովոյ կարդացած Տեղեկագրին պատճենն է:

#### ԱՄԵՆԱՊԱՏԻ ՍՐԻԱԶԱՆ ՀԱՅՐ,

1928 Նոյեմբեր 25 ին Լոնտրայէն Երուսաղէմ Ժամանեց Պատրիարքարանիս Դիւանապետը, Տիար Կարապետ Յ. Նուրեան, յաջողութեամբ գլուխ հանելէ յետոյ իրեն յանձնուած այն պաշտօնը, որ էր՝ ձիպրան Կարկուռի Ժառանգորդաց կողմէ՝ Երուսաղէմի մէջ Հայոց Ս. Յակոբեանց վանքին պատկանող Մեծ Արշի մասին Վերաքընութեան համար Անգլիոյ Կայսերական Բարձրագոյն Ատեանի Դատական Մասնաւոր ձիւղին առջև տարուած Դատին առթիւ Ներկայացուցիչն ըլլալ Ս. Աթոռոյ, և անոր շահերուն պաշտպանութիւնը հետապնդել:

\* \* \*

Երկու տարի առաջ, այսինքն 1 Յունիս 1926 ին, Անգլիոյ Կայսերական Մասնաւոր Ատեանէն սոյն Դատը Լոնտրա փոխադրելու հրամանը Երուսաղէմ հասնելու թուականէն անմիջապէս յետոյ, Ձեր Ամենապատուութեան և Տնօրէն Ժողովոյ կողմէ Ս. Աթոռոյ Դիւանապետ Տիար Կարապետ Յ. Նուրեանին յանձնուած պաշտօնը կը բաղկանար հետեւեալ կէտերէ.

Ա.— Հսկել Դատի թղթածրարին Լոնտրա փոխադրութեանը, մասնաւորապէս հոգ տանելով որ՝ սոյն բաղմամտուն թղթածրարին թարգմանութիւնը Հակառակորդաց կողմէ չխեղաթիւրուի կամ չխարդախուի:

Բ.— Դատին վերաբերմամբ լրացուցիչ թղթածրար մը ներկայացնել՝ Կայսերական Մասնաւոր Ատեանին:

Գ.— Ձեր Ամենապատուութեան նա-

խագահութեան ներքեւ այս հարցին համար դումարուած Տնօրէն Ժողովոյ մասնաւոր նիստերուն մէջ՝ Դատի պաշտպանութեան մասին ընդգրկուած սկզբունքներուն համաձայն՝ հաղորդակցիլ ի Լոնտրա մեր ընտրած փաստաբաններուն՝ Մր. Ֆաուլէր էնտ Լէկի, Սըր Անթօն Պէրթրամի (Նախկին Պետ Կրպոսի Արդարութեան Դործոց Պաշտօնատան), և Սըր Շէլտօն Ամօսի (Նախկին Իրաւագէտ-Որդհրդական Եզրպտական Կառավարութեան) հետ:

Դ.— Ներկայացնել Պատրիարքարանը՝ Կայսերական Մասնաւոր Ատեանին մօտ, հսկել Դատի ընթացքին՝ Լոնտրայի մէջ, և տեղեկ պահել Պատրիարքարանը՝ Դատին ամէն մանրամասնութեանց:

\* \* \*

Այս Դատը, որուն ծագումը 73 տարիներու հնութիւն մը ունի, և որ ա՛յնքան տաղտուկ ու նիւթական զոհողութիւններ պատճառած է Պատրիարքարանին, այժմ յաջողութեամբ վերջացած ըլլալով, կարեւոր է ճշգրիտ տեղեկութիւններ տալ անոր ունեցած ընթացքի մասին, նախ՝ Պաղեստինի Երիտանական զբաւումէն ի վեր Երուսաղէմի դատարաններուն առջև, և յետոյ՝ անոր ի Լոնտրա փոխադրուելուն առթիւ պատրաստուած այն պաշտպանողականին վերաբերմամբ, որուն շնորհիւ՝ Լոնտրայի Կայսերական Մասնաւոր Ատեանին կողմէ մերժուեցաւ ան:

\* \* \*

Զինադադարէն քիչ յետոյ, 1919 Մարտին, ձիպրան Կարկուռի Ժառանգորդները, յուսալով որ, այն ատեն տիրող վարչական տակնուվրայութիւնը և թրքական հին արձանագրութեանց փճացումը, — որոնք արդիւնք էին թրքական Իշխանութեանց Պաղեստինէն հապճեպ հեռացումին — կրնային նպաստաւոր ըլլալ իրենց, վերանորոգեցին՝ իրենց հօրը կողմէ Պատրիարքարանին դէմ վաղուց ի վեր տեղի ունեցող շանթի փորձը, և դատ բացին Ս. Աթոռոյ դէմ՝ առաքելով:

1.— Թէ՛ իրենց հայրը՝ ձիպրան Կարկուռ, 10 Բէպ Իւլ Ախըր 1275 թուակիր Հիօճէթը Շէրիով՝ 6000 զրուշի փոխարէն



գնած էր յերեսագէտ՝ Բաս Իւլ Մէյտանի վրայ Մեծ Արս կոչուած դեղինը, որ այժմ կը դառնուի Պատրիարքարանի սեպհական նութեան ներքեւ:

2.— Թէ՛ այն թուականին, երեսագէտի Հայոց Յովհաննէս Պատրիարքը՝ իր լիութեամբ համար այդ հոգը ձիւղրան Կարկուռի ձեռքէն, համաձայնելով Երեսագէտի կատարելիքին հետ՝ զայն բանտարկել տրուած էր, և վերոյիշեալ Հեօճճէթը ջնջել տալէ յետոյ՝ յաջորդած էր զնեւ նոյն հոգը կատարութեան ձեռքով, և այս կերպով 75,000 դրուի փոխարէն՝ 5 ձէմաղի Իւլ էփէլ 1276 ին տրուցած էր այդ դեղինին:

3.— Թէ՛ յետոյ, ձիւղրան Կարկուռը ողջացած էր երեսագէտի մէջ, և ասացած էր զատական որոշում մը՝ թէ հոգը իրեն կը պատկանէր, բայց չէր կարողացած զայն իրեն վերագործնել տալ, վասն զի Հայեւրը շատ ազդեցիկ էին:

4.— Թէ՛ ձիւղրան Կարկուռ, 1302 ին, Յովհաննէս Պատրիարքի յաջորդ Եսայի Պատրիարքին Պոլիս գտնուած պահուն, Անատոլու Դատար-Ասքէրի Դատարանին առջև Եսայի Պատրիարքին դէմ դատ բացած՝ և ձեռք բերած էր Անատոլու Դատար-Ասքէրէին՝ 1 ձէմաղի Իւլ էփէլ 1302 թուականով և Ֆէթվախանէէն վաւերացած Իլամ մը, որ նոյն հոգին տէր կ'ընէր զայն:

5.— Թէ՛ Հայոց ազդեցութեան շնորհիւ՝ Սուլթան Ապա Իւլ Համիտ Իրատէով մը արգիլուած էր այս վճիռին գործադրութիւնը, և ձիւղրան Կարկուռը ձերբակալելու դատապարտել տալով 3 տարուան բանտարկութեան՝ արգտրած էր Դասթէմուռի ուր 6 տարի բանտը մնալէ յետոյ մեռած էր ան:

6.— Իրբև հետեանք այս ամբաստանութիւններուն, ձիւղրան Կարկուռի ժառանգորդները կը պահանջէին՝ Անատոլու Դատար-Ասքէրի Իլամի գործադրութեամբ՝ հոգին իրենց սնուան արձանագրուելը, ինչպէս նաև վնասուց հատուցում:

\*  
\* \*

Կարկուռի ժառանգորդաց այն ամբաստանութիւնը՝ թէ Պատրիարքարանի ազդեցութեամբ իրենց հայրը հարստահարուած է, Պատրիարքարանը հերքեց բա-

յէ ի բաց թէ՛ նախնական Դատարանին և թէ՛ Հոգային Դատարանին առջև՝ իր պաշտպանողականներովը: — Եւր Հոգային Դատարանը, իրենց այդ ամբաստանութիւնները հաստատող փաստաթուղթեր պահանջեց Կարկուռի ժառանգորդներէն, ասոնք կըցանցոյց տալ միայն՝ Պէյ Օղլու Իքինճի ձինայէթ Մահքէմէսէն 16 Յունուար 1317 ին (այսինքն Պոլսոյ մէջ Կարկուռի Դատար վերջացած ըլլալէ 10 տարի յետոյ) արձակուած վճիռ մը, որով մանրամասնօրէն կը հաստատուէր, թէ Կարկուռ իրօք կրած էր 5րդ հատուածին մէջ յիշուած զատապարտութիւնը, բայց ատիկա արդիւնքն էր իր մօտ գտնուած արաբական շարժումին մը վերաբերեալ թուղթերուն և գիրքերուն: Բայ աստի, Պատրիարքարանի կողմէ Հոգային Դատարանին ներկայացուած թուղթերէն յայտնի եղաւ որ՝ Կարկուռ, մինչև իսկ բանտը գտնուած առան, աղատ ձգուած էր փոխանորդով հետապնդելու իր սնննական դատերը: Կարծեցեալ ճնշումի մը խնդիրն ալ այս կերպով վերնալով՝ Հոգային Դատարանը մերժեց Կարկուռի ժառանգորդներուն այդ սուտ ու սնտի ամբաստանութիւնը:

Դալով վերոյիշեալ 4րդ հատուածին մէջ յիշուած Անատոլու Դատար-Ասքէրի Իլամին գործադրելի ըլլալու կամ չըլլալու հարցին, Պատրիարքարանի փաստարանները յայտնեցին թէ՛ այդ Իլամը անգործադրելի էր, վասն զի Սուլթանին կամայական մէկ Իրատէովը չէր որ ջնջուած էր ան, ինչպէս Կարկուռի ժառանգորդները կը պնդէին, այլ կոնստանուր դատապարտութեան մը ենթարկուելէ յետոյ՝ ոչ-գործադրելի հռչակուած էր ան: Պատրիարքարանը, այն առան (1302) այս Իլամին գործադրութեանը ընդդիմացած էր, սա հիման վրայ, թէ ի՛նքն իսկ էր հոգին բուն սեպհականատէրը: Այդ Իլամին գործադրելի կամ ոչ-գործադրելի ըլլալու հանդամանքները քննելու գործը յանձնուած էր Պետական Խորհուրդին: Պետական Խորհուրդը, խնդիրը մանրամասնօրէն քննելէ վերջ, 23 Շապան 1303 թուական որոշումովը վճած էր թէ՛ այդ Իլամը իրօք անգործադրելի էր, վասն զի անով՝ Եսայի Պատրիարքին դէմ վճիռ կ'արձակուէր իրբև անհատի մը դէմ, ասանց նը-



կատի տանուելու, թէ Պատրիարքը այդ հոգին Միտիւնիւնէն էր միայն:

Մէնչիսի Թէոդիգաթն ալ կը հաստատէր սոյն պարագան իր որոշումովը, վերջ տալով իրեն նախագէտ յանձնուած սոյն դատի վերաքննական Դատաւարութեան, վասն զի նոյն ատեն՝ Եսայի Էֆէնտի (Եսայի Պատրիարք) վախճանած էր: Ուստի՝ Եսայի Էֆէնտիի (Եսայի Պատրիարք) ղէմ՝ անհատական հանգամանքով մը արձակուած այդ Իլամը ի մասին հոգի մը՝ որ իրեն չէր պատկաներ, չէր զօրէր ինքնին ընդդէմ Պատրիարքարանին՝ որ բուն սեպհականատէրն էր հոգին: Մնաց որ, Պատրիարքարանի փաստարանները նկատի նշանէին գլխաւորապէս, զատին վերաբերմամբ, Միտիւնիւնի Չիֆուսի գոյութիւնը:

\*  
\* \*

Դատը ձգձգելու եւ Մէնչիսի Թէոդիգաթի թողութիւնը ցոյց չտուելու մասին կարկուռներու թափած բոլոր ջանքերուն հակառակ, եւ հակառակ այն պնդումներուն՝ թէ դատաւարութեան իսկ պէտք չիկար՝ որովհետեւ իրենց խնդիրը նախագէտ տրուած Իլամի մը զործադրութիւնն էր միայն, այնուամենայնիւ Հոգային Դատարանը՝ համոզում գոյացնելով Շուրայր Տէօվլէթէն տրուած որոշման օրինաւորութեան մասին, 13 Փետրուար 1924 ին արձակեց իր վճիռը ի նպաստ Պատրիարքարանի, վերահաստատելով Շուրայր Տէօվլէթի վճիռը, եւ մերժելով իրբեւ ոչ հաստատուած՝ Պատրիարքարանի ղէմ կարկուռներուն բրած ամբաստանութիւնները:

\*  
\* \*

Կարկուռի ժառանգորդները՝ այս վճիռին ղէմ դատը շարունակեցին վերաքննելու Ատեանին առջեւ: Բայց վերաքննելու Ատեանն ալ 29 Յուլիս 1925 ին արձակած իր վճիռովը հաստատեց Հոգային Դատարանի վճիռը, յայտարարելով թէ այս խնդրոյն մէջ թէպէտ շատ մը մութ կէտեր կային, բայց Միտիւնի Չիֆուսի ալ կար, եւ նկատելով որ օրինական Միտիւնի Չիֆուսի ժամանակամիջոցը անցած էր, եւ կարկուռները՝ չէին կրցած ապացուցել իրենց այն

ամբաստանութիւնը՝ թէ Պատրիարքարանի կողմէ ազդեցութիւն մը ի գործ գրուած ըլլայ իրենց ղէմ:

Պէտք է հոս դիտել տալ, թէ Պաղեստինի մէջ վերաքննելու Ատեանը կազմուած է երկու անդլիսցի եւ մէկ տեղացի դատաւորներէ: Վճիռները կ'արձակուին կամ միաձայնութեամբ, կամ ձայներու մեծամասնութեամբ: Այս վերջին պարագային, այն դատաւորը որուն տեսակէտը կը տարբերի իր պաշտօնակիցներուն տեսակէտէն, պէտք է որ պարզէ իր պատճառարանութիւնները յաւելուածական վճիռով մը, որ կը կցուի մեծամասնութեան վճիռին:

Պաղեստինի վերաքննելու Ատեանի տեղացի Դատաւորը, որ հմուտ ըլլալով արաբերէն եւ տաճկերէն լեզուներու՝ կըրցած էր լիւրի եւ խորագէտ ուսումնասիրել խնդիրը, իրաւունքի տեսակէտով Պատրիարքարանի հանդէպ առաքելութիւն մը չունենալով հանդերձ՝ ձեւի մասին սակայն, իր պաշտօնակիցներէն տարբեր կարծիք մը յայտնեց: Իրեն համար Միտիւնի Չիֆուսի խնդիր իսկ չէր ներկայանար: Վասնզի կարկուռներու առաջ բերած դատը՝ որեւէ օրինական հիմ չունէր: Կարկուռներուն կողմէ ներկայացուած Մէնչիսի Թէոդիգաթի Մարգարէտի ուսումնասիրութիւնը՝ ցոյց տուած էր իրեն, որ կարկուռին՝ Անատօլու Դատը-Ասքէրէն ձեռք բերած Իլամը անկանոն եւ խաղախալ էր, եւ բնաւ օրինական որեւէ արժէք չունէր: Միտիւնի Չիֆուսի եղած ըլլար կամ ո՛չ:

Տեղացի Դատաւորին յաւելուածական վճիռին մէջ մանրամասնօրէն պարզուած էր այս տեսակէտն իր պատճառարանութիւններով, եւ այդ վճիռը կը տրուէր ի նպաստ Պատրիարքարանին:

\*  
\* \*

Կարկուռները՝ երրօտղէմի մէջ դատերին կորսնցուցած ըլլալով, վերջնական վերաքննութեան համար ուղղեցին դատը տանիլ Լոնտրոյի Կոյսերական Մասնաւոր Ատեանի Դատական ձիւղին առջեւ: Իրենց հարուստ մէկ ազգականներին շահակից ընելու փայլուն խոստումներով, կըցան անկէ զրոտական կարեւոր օժանդակութիւն մը ապահովել, եւ ստալօզ խնդրազիր մը



մատուցանելով Կայսերական Մասնաւոր Ատեանին, յաջողեցան 1 Յունիս 1926 ին ձեռք բերել Կայսերական Հրամանագիրը, որով կը հրամայուէր գտար Լոնտրա փոխադրել, Կայսերական Մասնաւոր Ատեանէն վերաքննուելու համար, ինչ որ ծանր բարդութեան մը առջև կը դնէր Պատրիարքարանը՝ այնքան զժողարութիւններէ և զանոորութիւններէ ետք, որոնց ենթակուած էր այս դատին շնորհիւ, ինչպէս ըսինք արդէն (\*):

Դատին պաշտպանութիւնը հակառակորդներուն կողմէ՝ այս անգամ ստանձնած էր Պաղեստինաբնակ փաստաբան մը: Եւ որպէսզի կարեկցութիւն և բարեացակամութիւն արթնցնէ ի Լոնտրա, ներկայացուցած էր դատը իբրեւ խնդրանք մը Այլի մը (Կարկուռի որդւոյն Այլիին) և իր որբերուն կողմէ՝ որպէս թէ մեծ զրկանք մը եղած էր իրենց: Մատուցուած այդ խնդրանքը — որուն մէկ պատճէնը խկոյն ձեռք բերած էր Պատրիարքարանը — հաւաքածոյ մըն էր զրպարտութիւններու ու սուտ յայտարարութիւններու:

Այս խնդրանքին մէջ ո՛չ միայն կը կրկնուէին Կարկուռներուն Պաղեստինի Դատաբաններուն առջև նախապէս ըրած անհիմն ամբաստանութիւնները, այլ և այս խնդրով հետաքրքրուած Շէրիի դատական գանազան կազմերուն կամ Կառավարական Պաշտօնատանց սխալ հանգամանքներ կը վերադրէր փաստաբանը, զէպքեր հնարելով, կամ բուն զէպքերը խեղաթիւրելով կամ ծածկելով, թուականներ փոփոխելով, և յանգանութիւնը կ'ունենաւ՝ իրը թէ սկիզբէն ի վեր պատմական ընկու Կարկուռնան Դատին:

Ըստ այսմ՝ Կարկուռներու կողմէ ներկայացուցուած այդ խնդրագիրը զխառնութեան կը հիմնուէր հետեւեալ շինծու յայտարարութեանց վրայ.

1.— Թէ՛ Մահքէմէի Շէրիի 10 Բէպի

(\*) Չմոռնանք ըսելու որ այս երկարատեւ դատին սկզբնաւորութենէն և անոր ամբողջ տեսողութեանը շրջանին՝ Կարկուռները, նոյն իսկ դատը Լոնտրա փոխադրելէ վերջն ալ, զանազան միջոցներ զործածելով, աւելի կամ պակաս գումարներ կ'ազգէին Պատրիարքարանէն՝ դատէն ձեռնթափ ըլլալու համար: Բայց Պատրիարքարանը՝ վստահ իր դատին արդարութեանը՝ ամէն անգամ մերժած էր այդպիսի անպատեալ բնականաւորութիւն մը:

Իւլ Սանի 1275 թուակիր Հէօճէթով խնդրոյ առարկայ գետինը Կարկուռ գնած և աէր դարձած էր անոր, բայց Յովհաննէս Պատրիարք բանտարկել տուած էր թէ՛ Կարկուռը և թէ՛ այդ գետինը ծախողները, և որովհետեւ այն ատեն օրինական չէր եկեղեցական Մարմնոյ մը համար հողատէր ըլլալ, յիշեալ Պատրիարքը ուրիշ ձեռքով 75,000 զրուլի գնել տալով այդ գետինը՝ տիրացած էր անոր:

2.— Թէ՛ Կառավարական Գործադիր Մարմինը(?) յետոյ անուանած էր յատուկ Գումիարօն մը, որուն կողմէ 5 Մուհարրէմ 1280 ին արուած տեղեկագրին մէջ յայտարարուած էր թէ՛ այն գնումը՝ որուն վրայ կը հիմնուէր երուսաղէմի Հայոց Պատրիարքը՝ անարժէք էր:

3.— Թէ՛ Կարկուռ գաւ բացած էր երուսաղէմի Քաղաքային Դատարաններուն առջև:

4.— Թէ՛ Կարկուռ՝ վերաքննութեան Դատ ալ բացած էր(?) և 1 Ճէմադի Իւլ Էփլէ 1302 ին՝ Անատոլուի վերաքննիչ Ատեանը(?) հաստատած էր իր գնումին օրինականութիւնը:

5.— Թէ՛ 21 Ճէմադի Իւլ Էփլէ 1303 ին՝ Կ. Պոլսոյ Շէրիի Բարձրագոյն Ատեանը(?) հաստատած էր Անատոլուի վերաքննիչ Ատեանին Վճիռը:

6.— Թէ՛ չատ մը յետաձգումներէ վերջ, Կարկուռ յաջողած էր, 4 Աղոսթոս 1310 ին երուսաղէմ յղել տալ Իճրայի հրաման մը: Բայց այս հրամանին զործադրութիւնը արգիլուած էր՝ Արդարութեան Գործոց Նախարարութեան կողմէ 18 Մայիս 1311 թուականով տրուած վարչական ուրիշ հրամանով մը (\*):

7.— Թէ՛ Հայերը 1317 ին աքսորել տուած էին Կարկուռը ի Գաթթէմունի, ուր և մեռած էր ան 1322 ին (\*\*):

Դիտել կուտանք թէ սոյն յերևրածոյ պատմականին մէջ յիշուած զէպքերը ամբողջովին սխալ կամ խեղաթիւրուած են.

(\*) Սոյն խնդրագրին բոլոր ստայօզ հատուածներն ալ՝ միառմի իրենց արժէքին վերաձուած են մեր Պաշտօնադատական յօդուածներուն մէջ, ինչպէս պիտի տեսնուի յետոյ:

(\*\*) Կարկուռի բանտարկութեան պատճառները արդէն ի վերեւ պարզուած են՝ իրեն զէմ այդ մասին արձակուած Վճիռին մէջ:



անոր մէջ յիշուած դատարաններն ու վարչական կազմակերպութիւնները՝ կամ բնաւ գոյութիւն չեն ունեցած եւ կամ չինձու հանգամանքներով ներկայացուած են, եւ որեւէ յիշատակութիւն չկայ այն կարեւոր փաստաթուղթերու մասին, որոնց համաձայն՝ Կարկուռի կեղծ Հէօճճէթը ջնջուած է 1276 ին երուսաղէմի Մէճլիսի Քէպիրին տուած որոշումովը՝ եւ երուսաղէմի Մէճլիսի Իտարէն ալ՝ 1302 թուականի Մազպաթայով՝ յետ վերստին քննութեան՝ Կարկուռի վերոյիշեալ կեղծ Հէօճճէթին ջնջումը օրինական կը համարի: Չէ ակնարկուած նաեւ Պետական Խորհուրդի 22 Շապան 1303 ի Մազպաթային որոշումը, ուր կը մատնանշուէր Անատոլու Գատը-Ասքէրին կողմէ տրուած ապօրինի Իլամին անվաւերութիւնը: Աւելի վարը պիտի շեշտուի՝ մեր իրաւունքը յստակօրէն լուսարանող սոյն փաստաթուղթերուն կարեւորութիւնը: Բաց աստի, Կարկուռներուն ի Լոնտրա մատուցած խնդրագրերը լի էր Մէճլիսի մէջբերումներով, որոնք ուղղակի աւանդութիւն մը չունէին բնաւ խնդրոյն հետ:

Լոնտրայի մէջ իրենց գտարը վարելու համար՝ Կարկուռներուն Պաղեստինարնակ փաստաբանին կողմէ նշանակուած անգլիացի փաստաբանը անուանի եւ պատուաւոր անձնաւորութիւն մը ըլլալով հանդերձ, Կարկուռներու այս միակողմանի կամ սուտ յայտարարութիւններէն ազդուած կ'երեւէր, եւ կը գործէր սխալ համոզումէ մը տարուելով:

\*

\* \*

Ստեղծուած այս լուրջ կացութեան առջեւ, Պատրիարքարանը՝ զիտակից ըլլալով Ազգին հանդէպ իր ունեցած պարտականութեան եւ վստահ իր իրաւունքին ու Բրիտանական արդարադատութեան, լիութիւն գործը գրաւ իր բովանդակ ջանքերն ի պաշտպանութիւն իր դատին:

Աւստի Ձեր Ամենապատուութեան նախագահութեամբ Տնօրէն Ժողովի մասնաւոր նիստերուն մէջ հարցը ուսումնասիրուեցաւ եւ վիճարանուեցաւ իր ամէն կողմերովը: Անյապաղ տրուեցան հետեւեալ որոշումները, եւ ազդուօրէն հետապնդուեցաւ անոնց ճշդիւ գործադրութիւնը:

Ա.— Գուշակելով որ հակառակորդներուն փաստաբանը կարելին պիտի ընէր՝ խարգախելու համար Պաղեստինեան դատարաններուն մէջ գոյութիւն ունեցող թղթածրարները, անոնց բովանդակութիւնը համաձայնեցնելու գիտումով ի Լոնտրա Կարկուռներու մատուցած խնդրագրին, որոշուեցաւ որ ամէն ջանք թափուի՝ թղթածրարը իր ամբողջութեամբ զրկուելու համար Լոնտրա, եւ թարգմանութիւնները մեծ զգուշաւորութեամբ համեմատել տալու փաստաթուղթերուն արարելէն եւ թուրքերէն բնագիրներուն հետ: Թարգմանութեանց ճիշդ ըլլալու հարցին կարեւորութիւնը գիւրին կը հասկցուի, երբ յիշուի թէ՛ ըստ Կանոնի՝ այս թարգմանութիւնները կատարելու գործը կը վերաբերէր Հակառակորդ կողմին:

Բ.— Գիտակ ըլլալով որ Լոնտրայի Կայսերական Մասնաւոր Ատեանի Դատական ձիւղը, իրեն ներկայացուած բոլոր դատերու վերաքննութեան մէջ, նկատուածութեան կ'առնէ ոչ միայն դատին օրինական կէտերը, այլ նաեւ արդար բնոյթը, որոշուեցաւ, վաւերացնել փաստաթուղթերու ձեռք ներկայացնել՝ դատին ի սկզբանէ անտի ունեցած բոլոր պարագաները, որպէսզի Կայսերական Մասնաւոր Ատեանը կարենայ խնդրին խելամտիլ կատարելով զիտակցութեամբ:

Ա. կէտին մասին Պատրիարքարանը ստիպուեցաւ բուռն պայքար մղել: Հակառակորդ կողմի Պաղեստինի փաստաբանը՝ թղթածրարը կազմող 90 կտոր փաստաթուղթերուն մէջէն՝ միակողմանի ընտրութեամբ՝ միայն 30 կտորի ցանկ մը պատրաստած էր, եւ կը պնդէր որ Լոնտրա զրկուելիք թղթածրարը բաղկանոր միայն այդ 30 կտորներէն: Հարկ եղաւ զինքը Դատարան կոչել, ուր Պատրիարքարանի պահանջումին վրայ, թղթածրարին պարունակած փաստաթուղթերը ամբողջութեամբ եւ մի առ մի քննուեցան յստակապէս կազմուած դատական Գօմիսիոնի մը առջեւ, եւ որոշում ձեռք բերուեցաւ, որ գոյութիւն ունեցող փաստաթուղթերու մէջէն կարեւորագոյն նկատուած 77 կտորներէն կազմուի Լոնտրա զրկուելիք թղթածրարը: Այս որոշումը ձեռք բերելու համար պէտք եղաւ երեք ամիս մաքաւիլ, եւ



Դատարանն ալ առ այս վեց երկար նիստեր նուիրեց:

Եօթը հարիւր էջերէ բաղկացած արաբերէն և թուրքերէն սոյն դատարանում փաստաթուղթերը ճշգրիտ թարգմանելու խնդիրն ալ՝ աւելի զժուարթութեամբ լուծուեցաւ, և մեծ վէճեր բացաւ Պատրիարքարանին և հակառակորդ կողմի փաստաբանին միջև: Այս վերջինը ջանք կ'ընէր միշտ թարգմանութիւնները խեղաթիւրելու, բայց Պատրիարքարանը՝ որ ի ձեռին ունէր սոյն թղթածրարին անգլիերէն անընտրելի թարգմանութիւնը, կրցաւ խայտառակել հակառակորդ կողմի փաստաբանին խարդախ թարգմանութիւնները: Դործը վերստին Դատարան ինկաւ, և Կարկ եղաւ 18 ամսուան մէջ 30 անգամ դատարան ներկայանալ, որպէսզի թղթածրարին ճշգրիտ թարգմանութեան հարցը — որուն տիրապէս կապուած էր դատին բոխտը — յաջող լուծուի մը զանէր ի գահաջումն Պատրիարքարանի արդար պահանջութեան:

Գալով Բ. կէտին՝ Պատրիարքարանը հոյլ մը աղերսապիր ներկայացնելով Մահքէմէի Շէրիին՝ վերջապէս յաջողեցաւ փնտռել և գտնել տալ Մահքէմէի Շէրիի 1275-1280 թուականներու հին տոմարները, և ստանալ անոնց պարունակած արձանագրութիւններուն վաւերացեալ պատճէնները: Այս կերպով երեսն հառուկան անցեալին մէջ տեղի ունեցած վաւերական դէպքեր և կազմուեցաւ բուն իրողութիւնները պատկերացնող յաւելուածական թղթածրար մը, որուն մէջ յայտնապէս հաստատուած են հետեւեալ պարագաները.

1. — 5 ձէմազի Իւլիվէ 1276ին (1858) երեսուցէմի Հայոց Յովհաննէս Պատրիարքը 75,000 դրուշի կը գնէ Կառավարութեան կողմէ աճուրդի հանուած հողը՝ որ կը գտնուի յերեսուգէմ, Բառ-Իւլ-Մէյտան կոչուած տեղը: Այս հողին նախկին սեպհականատէրներն էին՝ երեսուգէմի մերձակայ Լիֆթա կոչուած գիւղէն 18 գիւղացիներ:

Յովհաննէս Պատրիարք օրինաւորապէս տէր կ'ըլլայ այս հողին, և սոյն թուականէն, այսինքն 73 տարիներէ ի վեր, երեսուգէմի Հայոց Պատրիարքարանին սեպհականութիւնը կը գտնայ նոյն գետինը,

որուն վրայ Հայոց Պատրիարքարանը քանի մը մեծ շէնքեր կառուցանել տուած է: Յետոյ, ոչ Կարկուտ և ոչ ալ իր Ժառանգորդները նոյն գետինին ձեռք չեն դրած ընաւ:

2. — Պատճառը, որուն համար Լիֆթայի 18 գիւղացիները սոյն գետինը Կառավարութեան միջոցաւ ծախու հանած էին, ա՛յն եղած էր որ՝ Կարկուտ կեղծ Հէօճճէթ մը յոյց տուած էր, որուն մէջ այս 18 գիւղացիներէն 9 ին անունները կը յիշուէին, բայց մնացեալ 9 սեպհականատէրներուն անունները չէր կրցած ստուգել, կամ չէր ուզած յիշել զանոնք՝ անչափահաս ըլլալուն պատճառաւ. — այս Հէօճճէթին մէջ կ'ըսուէր թէ, Կարկուտ այս գետինը գնած էր 6000 դրուշի փոխարէն:

Հողին բուն սեպհականատէրները, այսինքն Լիֆթայի այդ 18 գիւղացիները խմբովին Կառավարութեան կը բողոքեն ուղղակի, կամ խնամակալներու միջոցաւ: Ասոր վրայ Կառավարութիւնը կը կոչէ Կարկուտը երեսուգէմի Մէճլիսի Քէպրիին առջև, ուր՝ երբ գետինին սեպհականատէրներուն հետ երես երես կը բերուի՝ Կարկուտ կ'ուրանայ իր արարքն ու կեղծ Հէօճճէթին զոյութիւնը: Կառավարութիւնը սակայն, քննելով Մահքէմէի Շէրիի տոմարները՝ երեսն կը հանէ որ իրօք կա՛յ հոն արձանագրութիւնը այդպիսի Հէօճճէթի մը, զոր Կարկուտ խարդախութեամբ ձեռք բերած էր հաճոյակատար զրազիրի մը մեղսակցութեամբը: Այս արձանագրութիւնը կը ջնջուի: Բայց Կարկուտ, հակառակ իր բանտարկուելուն, և զինքը դատապարտող ակներեւ ապացոյցներուն՝ կ'ուրանայ իր քով գտնուող Հէօճճէթի մը զոյութիւնը, և կը մերժէ յանձնել զայն: Ասոր վրայ, հողին բուն սեպհականատէրներէն չափահասները, և իրենցմէ անչափահաս եղողներուն խնամակալները՝ Մահքէմէի Շէրիէն արտօնութիւն ստանալէ յետոյ՝ կը խնդրեն Կառավարութիւնէն, որ հողը աճուրդով վաճառէ, և փոխարժէքը իրենց յանձնէ, վասնզի կը վախճային որ Կարկուտ՝ ի ձեռին ունեցած այդ կեղծ Հէօճճէթով՝ կրնար ապագային նորանոր զժուարթութիւններ չարուցանել իրենց դէմ:

3. — Կառավարութիւնը, այն թուականին ուր գոհացում կուտայ Լիֆթայի 18



գիւղացիներու սոյն արդար պահանջումին, միամամանակ աճուրդի հանել կուտայ նաեւ ուրիշ գետին մը, որ կը գտնուէր Երուսաղէմի մէջ Դամասկոսի դրան մօտ, եւ յայտնի կ'ըլլար որ Կարկուտ՝ այս վերջին գետինը 6000 դրուշի գնած էր, առանց յարգելու Արաքի Գանձնամէկի գետիններու առուծախի վերաբերմամբ պարտադրած պաշտօնական նոր ձեւակերպութիւնները:

Դամասկոսի դրան այս գետինին համար էր որ՝ Կարկուտ քանի մը տարի վերջ, 1280 ին, յաջողած էր Երուսաղէմի Մէճլիսի Քէպիրէն ձեռք բերել զիր մը՝ սա յայտարարութեամբ որ՝ եթէ միայն Շէրիաթի հիման վրայ քննուէր գործը՝ իր այդ նախկին Հէօճճէթը պէտք էր վաւերական նշկատել, Կարկուտ այնպէս մը յերևարած էր գործը, որ այս գրութեան մէջ չէին յիշատակուած ո՛չ հողին գիրքը, եւ ո՛չ ալ սահմանները: Կարկուտ Դամասկոսի Գրան կողմի գետինին թղթածրարէն այս գիրը առնելով՝ տարիներ յետոյ Պոլիս, Անատօլու Գատը-Ասքէրին պիտի ներկայացնէր, մեր հողին վերաբերեալ թուղթերուն կցելով զայն, իբրեւ նոյն հողին վերաբերող վաւերագիր մը:

4. — Հաղլւրան 1286 ին (1866), Կ. Պոլսոյ իտալական ղեկավարին բողոքին վերայ, Կարկուտ կ'աքսորուի Երուսաղէմէն: Պատճառն այն էր որ՝ Կարկուտ, չարունակելով իր խորհրդածրարները, 1200 ոսկիի մուրհակ մը պատրաստած էր, եւ ա՛նոր ներքե կեղծած էր Բրուսիաոս Արիէլ անուն իտալահպատակ հրեայի մը ստորագրութիւնը: Կարկուտ, իր այս նենգութեան համար, թէն մէկ տարուան բանտարկութեան դատապարտութիւն կը կրէ, բայց իր ի գործ դրած միջոցներուն շնորհիւ կարելի չըլլար դատարանին վճիռը զորձադրել Երուսաղէմի մէջ: Եւ սակայն Պոլսոյ իտալական ղեկավարին բողոքին վերայ, Կարկուտ՝ կայսերական իրաւէնով Պոլիս կը տարուի, եւ հոն վերաքննուելով դատը, յանցանքը կը հաստատուի, եւ մէկ տարուան համար կը բանտարկուի: Բանտէն ելլելէ յետոյ՝ չ'արտօնուիր Երուսաղէմ վերադառնալ: Բայց Պոլսոյ մէջ հետզհետէ կը յառաջանայ իբրեւ Էւրղեփ փաստարան, եւ քսան տարի յետոյ վերստին մէջտեղ

կ'ելլէ, եւ այս անգամ՝ Էւրղեփի արտադրով, ու մեր Պատրիարքարանին սեպհականութիւնը խելու համար նոր փորձերու կը ձեռնարկէ:

5. — 1302 ին Եսայի Պատրիարք, որ յաջորդած էր Յովհաննէս Պատրիարքին, կ'ստիպուի Պոլիս երթալ՝ Երուսաղէմի վանքին պարտքը կարգադրելու յոյսով: Կարկուտ, որ ամէն տեսակ խարդախ գործերու մասնակցելով՝ ազգեցիկ գիրք մը գրուած էր այն տառն, կը կարծէ թէ բարեղէպ առիթը ներկայացած է իրեն, ուստի կը փութայ աղերսագիր մը մատուցանել Պապը Մէճլիսէթին: Եւ որովհետեւ իր քով պահած էր յոնձնել չուրած կեղծ Հէօճճէթը, որու մասին խօսեցանք վերեւ, եւ զոր ջնջած էր Մէճլիսը Քէպիրը, այս անգամ կը դորձածէ այն զիրը՝ զոր 1280 ին ձեռք բերած էր Մէճլիսի Քէպիրէն՝ Դամասկոսի դրան մօտի գետինին համար, ինչպէս բացատրեցինք քիչ առաջ 3 Հատուածին մէջ: Այս գրութիւնները կը կցէ իր աղերսագրին, եւ հետապնդելով գործը, կը յաջողի Յէթմախանէէն հանել տալ հրաման մը՝ որպէսզի խնդիրը յանձնուի Անատօլու Գատը-Ասքէրին, որուն հետ կ'երեւի թէ Կարկուտ համաձայնած էր զազանապէս:

Անատօլու Գատը-Ասքէրին անմիջապէս կոչնագիր մը ուղղելով կը հրամայէ որ Եսայի Պատրիարք ներկայանայ իր դատարանին առջև: Հակառակ անոր որ Անատօլու Գատը-Ասքէրին ձեռնհաս չէր այս դատը տեսնելու, Կ. Պոլսոյ Պատրիարքարանը տեղեկութիւն ստանալու համար՝ Անատօլու Գատը-Ասքէրին մօտ կը զրկէ իր տաճկերէնի քարտուղար Կարապետ Էֆէնտի իրաւաստութեանը: Այս կերպով Ազգ. Պատրիարքարանը սխալ քայլ մը կ'առնէ, վասնզի Անատօլու Գատը-Ասքէրին, Կարապետ Էֆէնտիի ներկայութեանը, դատալարութիւն մը ձեւակերպելով՝ անձամբ Կարկուտին կարգով եւ բերանացի թարգմանել կուտայ արարելէն լեզուով շարադրուած վերոյիշեալ թուղթերը, եւ յետոյ կը հարցնէ Կարապետ Էֆէնտիին թէ ի՞նչ պիտի պատասխանէր ասոնց զէմ: Կարապետ Էֆէնտի կը պատասխանէ թէ՛ այդ գետինը Երուսաղէմի վանքին սեպհականութիւնն է, եւ Պատրիարքը անոր Միւ-



թէվէլին է միայն, թէ՛ այդ հողին վերաբերեալ թուղթերը կը գտնուին Երուսաղէմ, և պէտք է որ առկից բերուելով դատարանին ներկայացուին, և նկատողութեան ասնուին: Անատօլու Գատը - Ասքէրին ի նպաստ Կարկուտին Իքրարի մը հանգամանքը հազցնելով այդ պատասխանին, իր տոմարին մէջ արձանագրել կուտայ՝ թէ Կարապետ էֆէնտին Իքրար մը ըրած է, ու կը հրամայէ՝ ըստ օրինի ստորագրել առնոր ներքեւ: Կարապետ էֆէնտի կը մերժէ ստորագրել: Բարեբախտաբար, Անատօլու Գատը - Ասքէրին Մուավինը, որ ուղղամիտ անձ մըն էր, և չէր կրնար մեղսակից ըլլալ այսպիսի անարդարութեան մը, տոմարին մէջ արձանագրութիւն մը ձգած էր, յայտարարող թէ՛ Կարապետ էֆէնտին մերժած էր այդպիսի Իքրար մը ըրած ըլլալը, և ընդդիմացած էր ստորագրել անոր տակ:

Այսու հանգերձ, Անատօլու Գատը-Ասքէրին, շարունակելով իր սկսած ապօրինի գաղափարութիւնը, կ'արձակէ իր վրձնոր 1 ձէմաղի Իւլ էվվէ 1302, որով կը հրամայուի՝ Կարկուտին յանձնել Պատրիարքարանին սեպհական այդ գետինը:

6. — Այսպիսի անիրաւութեան մը առջև Ազգ. Պատրիարքարանը երկու խնդրազրկեր կը ներկայացնէ, մին՝ Կայսեր, և միւսը՝ Շէյխ Իւլ Իսլամին ուղղելով: Այս խնդրազրկերով կը բողոքուի Անատօլու Գատը - Ասքէրին գործած անարդարութեան դէմ: Շէյխ Իւլ Իսլամին մատուցուած խնդրազրկին կոչուած էր՝ Իլամին մէկ պատճէնը և խնդրուած անոր վերաքննութիւնը: Ասոր վրայ Իլամը կը յանձնուի Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիին՝ պէտք եղած քննութիւնը կատարելու համար:

Պատրիարքարանին կողմանէ Անատօլու Գատը-Ասքէրին դէմ եղած այս ծանր ամրաստանութեան առջև Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիին առաջին գործը կ'ըլլայ՝ երուսաղէմի Մէճլիսի Խտարէին միջոցաւ տեղւոյն վրայ քննութիւն կատարել տալ, ճշդելու համար՝ թէ ո՞վ էր հողին սեպհականատէրը: Վճռական կ'ըլլայ այս քննութեան արդիւնքը: Կը հաստատուի որ հողին նախկին բուն սեպհականատէրերը, որոնք 26 տարի առաջ Կառավարութեան ձեռքով ծախու հանած էին զայն, իրօք

Յովհաննէս Պատրիարքի Հէօճճէթին մէջ յիշուած 18 գիւղացիներն էին, և ոչ թէ անոնցմէ 9 հողին միայն, ինչպէս ցոյց տրուած էր Կարկուտի կեղծ Հէօճճէթին մէջ: Այս 18 անձերէն ողջ մնացողները, և անոնցմէ մեռնողներուն ժառանգորդները, երբ Երուսաղէմի Մէճլիսի Խտարէին կանչուելով կը հարցաքննուին՝ կը յայտարարեն՝ թէ այդ հողը երբեք չէր ծախուած Կարկուտին, այլ Երուսաղէմի Հայոց Պատրիարքին, և վաճառման թուականէն ի վեր նոյն հողը կը գտնուէր Հայոց Պատրիարքարանին սեպհականութեան ներքեւ: Քննութիւնը կը հաստատէր միանգամայն թէ՛ Երուսաղէմի Հայոց Յովհաննէս Պատրիարքը՝ այդ հողին համար Վազֆիէ հանել տուած չէր, վասնզի Երուսաղէմի Հայոց Պատրիարքներուն շնորհուած կայսերական Ֆէրմաններուն համաձայն՝ վանականներուն պատկանող հողերը՝ իրենց մահէն վերջ՝ Մարեագուպի (Ս. Յակոբ) վանքին բացարձակ սեպհականութիւնը կը դառնան:

Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիին երբ կ'ընդունի Երուսաղէմի Մէճլիսի Խտարէի տոյն Մազպաթան, իր ուշադրութիւնը կը դարձնէ խնդրոյն երկրորդ գլխաւոր կէտին վրայ, որ է, լուստրանել թէ Իլամին համաձայն՝ Կարապետ էֆէնտի վերագրուած Իքրարը իրօք կատարուած է թէ ոչ: Այդ կէտն ստուգելու համար՝ կը պահանջէ Անատօլու Գատը-Ասքէրին որ տոմարը յանձնէ Մէճլիս Թէտգիլգաթը Շէրիին: Բայց Անատօլու Գատը-Ասքէրին ձգձգութեամբ կը յաջողի ժամանակ մը խուսափել այդ հրամանը գործադրելէ: Իսկ երբ Անատօլու Գատը-Ասքէրին պաշտօնանկ կը հռչակուի, այն ատեն կարելի կ'ըլլայ այդ տոմարը մէջտեղ բերել, և Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիին կարող կ'ըլլայ ստուգել թէ ո՞չ միայն Կարապետ էֆէնտին չէր ստորագրած այդ կարծեցեալ Իքրարը, այլև, ինչպէս յիշուած է 5 Հատուածին մէջ, Անատօլու Գատը - Ասքէրի Մուավինին կողմէ նոյն տոմարին մէջ ձգուած արձանագրութեամբ կը հաստատուէր որ՝ Կարապետ էֆէնտի բացարձակապէս մերժած ու բողոքած էր թէ այդպիսի Իքրար մը չէր ըրած երբեք: Ասոր վրայ, Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիին, ըստիպուած, իր Մազպաթանին մէջ կը յայ-



տարարէր թէ, կանոնի հակառակ էր տրուած այդ Իլամը՝ նայելով Շէրիի Իլամնեւրու պատրաստութեան վերաբերեալ կանոնագրին 7րդ յօդուածի տրամադրութեան, եւ հետեւաբար, անդորձադրելի էր ան:

Որոշ է ուրեմն որ, Կարկուտին ո՛չ ՀէօՏՏէթը եւ ո՛չ Իլամը որինտեղան արժէք մը չէին ներկայացներ, եւ Մէճլիսի թէտգիլգաթը Շէրին կը պարտաւորուէր ամբաստանութեան տակ ձգել Անատօլու Գատը-Ասքէրին: Պարագան ծանրակշիռ էր ինքնին, եթէ աչքի առջև բերուին նոյն ժամանակի քաղաքական դժուարութիւնները: Վասնզի ամէն որ զիտէ՝ թէ այդ թուականներուն՝ Շէրիի գատարաններու իրաւասութիւններու մեծ մասը քաղաքացին գատարաններու փոխանցելու գատական բարենորոգմանց ծրագիրը կը հետապընդուէր, ինչ որ տեղի կուտար զիւրազգածութիւններու, որոնք արձագանդ կը գտնէին երկրին ամէն կողմերը:

Սակայն, Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրին կ'ազատէ ինքզինքը այդ դժուարութենէն, պատճառելով որ Եսայի Պատրիարք այն ատեն վախճանած ըլլալով՝ տեղի չէր մնար այլեւ վերաքննութեան գատավարութիւնը շարունակելու, քանի որ վերաքննութեան զիմողը՝ Եսայի Պատրիարք՝ մեռած էր: Ասկից զատ, Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրին, նկատի առնելով միայն Շէրաթը, եւ աննկատ թողլով, որ շնորհուած Պէրաթներու տրամադրութեան համաձայն՝ վանքապատկան հողերու բացառիկ Վազըֆի զրութիւնը ճանչցուած է Արազի Գանօննամէսիէն իսկ, Իլամի մասին դադար կը յայտնէր թէ՝ քանի որ Կարկուտի դէմ վերաքննութիւն պահանջող կողմը վախճանած էր, պէտք էր որ դորձադրուէր խնդրոյ առարկայ հողին վերաբերեալ Իլամը, եթէ երբորդ անձ մը, որ հողին վրայ իրաւունք ունենալ կը կարծէր, նոր դատ մը չքանար: Ասիկա կը նշանակէր ձեռք քաշել դորձէն, եւ թաքուն ձեռք մը տակ անձեռնհասութիւն խոստովանիլ, Անատօլու Գատը-Ասքէրին ամբաստանելու պարտաւորութենէն խուսափելու համար:

7. — Կարկուտ կ'օգտուի Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիի Մոպպաթային վերջին էջերուն պարունակած անորոշութենէն, եւ

իրեւ ի նպատակ իրեն որոշումի մը մեկնութիւնը տալով անոր՝ անմիջապէս Իճրային մօտ կը պահանջէ Անատօլու Գատը-Ասքէրիի Իլամին դորձադրութիւնը: Բայց Ազգ. Պատրիարքարանը, որ աշալուրջ կը հսկէր, կը փութայ Իճրա Տալիէսին ներկայացնելու իր առարկութիւնը, հաստատելով որ հողը իրեն կը պատկանի: Արդարութեան նախարարութիւնը՝ երեսն եկած դժուարութեան առջև՝ խնդիրը Բարձր Եպարքոսին միջոցաւ կը յանձնէ Պետական Խորհուրդին, որպէսզի քննէ զայն եւ տայ իր որոշումը:

Ասոր դէմ Կարկուտ կը բողոքէ, պնդելով որ Պետական Խորհուրդը իրաւասութիւն չունի այդ հարցը քննելու, քանի որ Շէրաթի հարց մըն էր ան: Կը պնդէ նաեւ՝ թէ Իլամը հաստատուած ըլլալով Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրիէն՝ Կարկուտ չէր յետաձգել անոր դորձադրութիւնը: Այսու հանգերձ, Պետական Խորհուրդը ձեռք կ'առնէ խնդիրը, եւ կը քննէ բոլոր թուղթերը, առանց ո՛ր եւ է կէտ մտի թողելու:

Ա. Ի մասին Կարկուտի այն ստայօղ յայտարարութեան՝ որ Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրին հաստատած էր Անատօլու Գատը-Ասքէրիին Իլամը, Պետական Խորհուրդը զիտել տալով որ Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրին՝ ընդհակառակը՝ Իլամին հիմը կողմոյ Կարապետ Էֆէնտիի Բքրարին չեղեալ նկատուիլը Անատօլու Գատը-Ասքէրիին տամարէն ստուգած է, կը յայտարարէ թէ՝ քանի որ այս Իլամը տրուած է Իլամը Շէրինեւրու պատրաստութեան վերաբերեալ Կայսերական Կանոնագրի 7րդ յօդուածին տրամադրութեան հակառակ, անդորձադրելի է, եթէ պարունակութիւնը չհաստատուի:

Բ. Եսայի Էֆէնտիի (Եսայի Պատրիարք) մահուան պատճառաւ Վերաքննութեան գատավարութիւնը չէր կրնար շարունակուիլ եւ Մէճլիսի Թէտգիլգաթը Շէրին եւս կը խոստովանէր որ նկատի չէր առած Կարապետ Էֆէնտիի սա էտկան յայտարարութիւնը՝ թէ Եսայի Պատրիարք միայն Միթէվէլին էր այդ հողին, եւ թէ այս գատը սկիզբէն տեղի ունեցած էր իրեւ երկու պարզ անհատներու միջև, եւ նկատի առնուած էր սոսկ անհատական հանգամանքով:

Գ. Այս խնդիրը Շէրիի գատ մը վերաքննելու մտօք չէր որ յանձնուած էր



Շուրայր Տէօփէթին, այլ՝ երուսաղէմի Պատրիարքարանին բրած հետեւեալ առարկութիւններուն վրայ, թէ՛ այս հոգը իրեն կը պատկանէր, թէ՛ Իլամը օրինական արժէք մը չներկայացնէին զատ՝ ետայի եփէնտիի անձին ղէմ տրուած էր իմասին հոգի մը՝ որ Պատրիարքին չէր պատկաներ, և հետեւաբար այդ Իլամը որեւէ աղերս չէր կրնար ունենալ հոգին բուն տիրոջը վերաբերմամբ՝ որ էր երուսաղէմի Հայոց Պատրիարքը:

Պատական Սորհուրդը այս կերպով լուծած ըլլալով իր իսկ իրաւասութեան հարցը, և ուսումնասիրելէ յետոյ երուսաղէմի Պատրիարքարանին շնորհուած Պէրաթը, կը հաստատէ թէ՛ Կայսեր կողմէ երուսաղէմի Պատրիարքարանին արուած առանձնաշնորհումն էր՝ որ Մար-Եագուպի (Ս. Յակոբ) վանականներուն հոգեբը՝ իրենց մահէն վերջ՝ սեպհականութիւնն ըլլան նոյն Պատրիարքարանին, և յոգուտ վերջնոյն՝ մատակարարութիւն օրուան Պատրիարքին ձեռամբ:

Արդ, խնդրոյ առարկայ գետինը զընթացած էր երուսաղէմի Հայոց Յովհաննէս Պատրիարքէն, որուն մահուամբը՝ սեպհականութեան իրաւունքը կ'անցնէր Մար-Եագուպի Վանքին, և տնկից ի վեր կը գտնուէր անոր սեպհականութեան տակ: Ուստի, Պատրիարքարանին՝ իր սեպհականատիրութեան հիման վրայ բրած ստորկութիւնը հաստատուն էր ևս զօրեղ: Ըստ այսմ, Պատական Սորհուրդը, 22 Շապան 1303 (1885) ին որոշում կուտայ՝ թէ Եսայի էփէնտիի անձին ղէմ տրուած Իլամը չէր կրնար գործադրուիլ իրեն չպատկանող այս գետինին համար, որուն միակ սեպհականատէրն էր երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը:

Այս վճռական որոշումը կը կարգադրէ խնդիրը, և կը խափանէ Կարկուռի յափըշտակութեան անխիղճ փորձերը:

Եթէ Կարկուռ իրապէս որեւէ իրաւունք ունեցած ըլլար այս հոգին վրայ, իրեն կը մնար մէկ ճամբու հետեւիլ: Այն էր՝ երուսաղէմի մէջ նոր դատ մը բանալ երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին ղէմ, որ սեպհականատէր ճանչցուած էր խընդրի առարկայ եղած գետինին: Կարկուռ շատ զգուշացաւ հետեւելու այս օրինաւոր

ճամբուն, զտնդի չէր կրնար յուսալ, թէ երուսաղէմի մէջ, ուր ծանօթ էին իր բոլոր խարէութիւնները, պիտի կարենար որ եւէ նոր խարդախ դատ մը բանալ, առանց անմիջապէս զիմականակըմ ըլլալու: Երուսաղէմի Մէծիփա Իտարէի Մազպաթային վերեւ յիշուած Ծրդ հատուածին եզրակացութիւնը շատ պերճախօս է այս մասին:

8.— Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը, իբրեւ Ս. Տեղեաց Երբորդ Միւթէփէլին, նոյն չրջանին, ինչպէս ևս հիմա, տնտեսական անձուկ կացութեան մասնուած ըլլալով՝ ստիպուած էր Կառավարութեան աջակցութիւնը խնդրել, զարման մը գտնելու համար իր աննախանձելի վիճակին: Կառավարութիւնը, երուսաղէմի Միւթէսարքութեան միջոցաւ քննութիւն կատարելէ վերջ, խորհուրդ տուած էր Պատրիարքարանին, թէ զրոմական իր անձուկ վիճակը բարուքելու միակ միջոցն էր՝ իր ձեռքն ունեցած Մեծ Առփին կէսը ծախել ևս անոր արդիւնքով հասութեան կալուածներ կառուցանել մնացեալ կէսին վրայ: Նախաբարաց Սորհուրդը, որուն ուղարկութեան յանձնուած էր այս խնդիրը, հաստատելէ վերջ՝ թէ Պատական Սորհուրդի վերոյիշեալ որոշումէն յետոյ՝ որեւէ օրինական արդիւք չէր մնար կարկուռը գործադրելու, Սուլթանէն իրաւէ մը հանել կուտայ, որով նոյնը կը յանձնարարուէր երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին:

Դատին հետ անուղղակի տնչութիւն ունեցող գիրը Կայսերական սոյն իրատէն էր զոր Կարկուռի ժառանգորդները ջանացին, մեր վերջին դատին տեսողութեանը, ներկայացնել՝ իբրեւ Կառավարութեան կողմէ ի գործ դրուած բանակալութիւն մը՝ դատը կեցնելու չարամտութեամբ: Իրողութեան մէջ սակայն, 6 Ռէճէպ 1304 ին, այսինքն Պատական Սորհուրդը որոշումէն տարի մը վերջ տրուած այս իրատէն՝ հիմնուած է այդ օրինական վճիռին վրայ:

9.— 12 Սէֆէր 1312 ին (1895), Կարկուռ, օգտուելով Հայկական Հարցի տաղնապներուն հետեւանքով Թիւրքահայոց հանդիպած դժբախտ պարագաներէն, կը ջանայ վերստին փորձ մը ընել երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին ղէմ: Համաձայնելով Պոլսոյ Իճրա Տաիքտիի պաշ-



տօնեային հետ, Երուսաղէմ ուղարկել կուտայ իր Իլամին մէկ օրինակը, անոր կցելով գործադրութեան մասին Իճրա Մէմուրիին ուղղած մէկ հրամանը: Ասոր վրայ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը անմիջապէս խնդրագիր մը կը ներկայացնէ Արդարութեան Նախարարութեան, կատարուածին վրայ բացատրութիւն խնդրելով: Արդարութեան Նախարարութեան մէջ կը քննուի Գատին թղթածրարը, որուն վրայ Իճրա Տալիքտին ոչ միայն անմիջապէս ետ կը քաշէ Իլամն ու անոր գործադրութեան հրամանը, այլ եւ Արդարութեան Նախարարութեանէն Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին ուղղուած 6 Ձիլգատէ 1312 թուական Պաշտօնադիրով կը յայտարարուէր՝ թէ միշտ զօրեղ է Պետական Սորհրդոյ որոշումը, որուն հիման վրայ շնորհուած Կայսերական Իրաւէէն ասդին ոչ մէկ բան պատահած է որ կարենայ փոփոխութիւն մը ապրենել արդէն կարգադրուած խնդրոյն մէջ:

\* \* \*

Ինչպէս կը տեսնուի, Պաղեստինի Գատարաններուն մէջ գոյութիւն ունեցող թղթածրարը՝ ճշգրտօրէն թորգմանուած՝ մէկ կողմէն կը հերքէր Կարկուռի Ժառանգորդներուն Լոնտրա ներկայացուցած եւ վերեւ յիշուած բովանդակ յայտարարութիւնները, եւ միւս կողմէն վաւերական փաստաթուղթերով կազմուած վերոյիշեալ յաւելուածական թղթածրարն ալ՝ որ կը պատկերացնէր բուն իրողութիւնները՝ երեսն կը բերէր այս գատին յաւելուածութեան եւ Շանրաւի ձեռնարկ մը ըլլալու պախարակելի բնոյթը:

Պատրիարքարանի գէմ բացուած այս գատը Պոլսոյ մէջ տեղի ունենալուն պատճառաւ, անոր մօտ մնացած բոլոր կէտերը լուսարանուած ըլլալով, ի վիճակի եղանք Լոնտրայի մէջ հաստատել թէ որեւէ օրինական հանգամանք չունէր Կարկուռի Ժառանգորդներուն մեղի գէմ բացած գատը, որուն հիմն ըստ ինքեան կը խախտէր հետեւեալ երկու զլխաւոր կէտերու նկատառութեամբ.

Ա.— Կեղծ է Հիօճճէթին:

Բ.— Ապօրինի է՝ ի ձեռնին ունեցած

Իլամին: Ուստի Գատարանը չի կրնար ընդունիլ զանոնք:

Հետեւաբար Գատին թղթածրարը Լոնտրա հասնելէն վերջ, անոր պարունակութիւնը եւ ձեր յաւելուածական փաստաթուղթերը Կայսերական Մասնաւոր Ատեանի Դիւաններուն մէջ քննուեցան, լսուեցան մեր ներկայացուցիչներուն բացատրութիւնները, եւ ապա Կայսերական Մասնաւոր Ատեանի պաշտօնեաները, որոնց յանձնուած էր վերջնական ձեւը տալ Գատին թուղթերուն՝ ներկայացուելու համար Կայսերական Մասնաւոր Ատեանի Լորտերուն, այլեւ համոզուած ըլլալով մեր արդար իրաւունքին՝ լուրջ գիրք մը բռնեցին հակառակորդ կողմին հանդէպ:

Մեր ներկայացուցիչներուն խնդրանքին վրայ, որոշեցին արդիւնէլ այս Գատի մասին հակառակորդ կողմէն ըլլալիք որեւէ ձգձուգում, եւ պարտադրեցին հակառակորդ կողմը, 12 Հոկտեմբեր 1928-էն երկու ամսուան վերջնական ժամանակամիջոցին՝ 400 ոսկի վճարել Կայսերական Մասնաւոր Ատեանի զբամարկդին, որպէսզի փութով յրացուէր թղթածրարին տպագրութիւնը, եւ ըլլալիք դիտողութիւններով միասին անյապաղ բերուէր Կայսերական Մասնաւոր Ատեանի Լորտերուն առջեւ: Կարկուռի Ժառանգորդները սակայն՝ տեսնելով որ խնդիրը խաղախելու հնարաւորութիւն չիկար այլեւս, եւ համոզուելով որ՝ Գատի շարունակութեան արդիւնքը պիտի ըլլար՝ մեծամեծ ծախսեր ընելէ յետոյ՝ վերջին անգամ զարձակ կորսնցնել զայն, որոշեցին փախուստ տալ, եւ իրենց արուած ժամանակամիջոցին առաջ յայտարարեցին Կայսերական Մասնաւոր Ատեանին առջեւ, թէ պիտի չկրնային պահանջուած վճարումն ընել: Ասոր վրայ, Կայսերական Մասնաւոր Ատեանը, անմիջապէս ջնջելով Կարկուռի Ժառանգորդներուն վերաքննութեան Գատը, սա հրամանը արձակեց Պաղեստինի Կառավարութեան, թէ ՄԵՐԺՈՒՍԷ ԸԼԼԱԼՈՎ ԿԱՐԿԱՌԻԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐՈՒՆ ԴԱՏԱՐԱՐԵԼԵՐ ԿԵՆԵՐԵՐ ԶԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԻԱՆԻ ՍՊՈՒԿԱՆՈՎ ԿԱՆՈՎ ՀՈՂԻՆ ՎԵՐԱԲԵՐԺԱՄԵՐ:

\* \* \*



Այս մեծ գաղտնի մեկ զիմայեղումները պատկերացնող ներկայ Տեղեկագիրը վերջացնելու տուն, պարտք կը համարենք մեր ջերմ գնահատումները յայտնել Ս. Սեւակի Պատուարժան Միաբանութեան, իր ցոյց տուած այն բարձր վստահութեան համար՝ զոր միշտ ունեցաւ հանդէպ Ձեր Ամենապատուութեան և Տնօրէն ժողովին, ինչպէս նաեւ այն գովելի պատրաստակամութեան համար՝ որով յանձնառու եղաւ բոլոր այն նիւթական զոհողութիւններուն՝ որոնք անհրաժեշտ էին Պատրիարքորանին պատիւն ու իրաւունքները պաշտպանելու համար մեծ անիրաւութեան մը դէմ:

Ի սրտէ շնորհաւորելով նաեւ մեր պատուական Դիւանագետին՝ Պ. Նուբեանի՝ գլխակից և բազմաշխատ գործունէութիւնն և կատարեալ յանձնարարութիւնը շնորհիւ Տեսա՞ն՝ կը խնդրեմ, Ամեն. Ս. Հայր, օրհնել զինքն և Տնօրէն ժողովի բոլոր անդամներն ու բովանդակ Միաբանութիւնը և համօրէն Հայ ժողովուրդը:

Խոնարհ Որդի  
Կադուսոց Տեսա՞ն

ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. ԿԱՅԸԿՃԵԱՆ

25 Յունիս 1929

Ս. Սրբոս

ԱՒԱԳ՝ ՏՕՆԵՐՈՒ ՀԱՆԳԷՄՆԵՐ,

ԱՄԱՆՈՐ ԵՒ ԵՆՈՒՆԻ

Այս տարի ալ Ս. Աթոռի մէջ աւանդական հանդիսաւորութիւններով կատարուեցան Աւագ Տօները, ինչպէս նաեւ Ամանորի և Ենոնեան խորախմանքները:

Այս առթիւ դպրոցական աշխատութիւններ զարկեցան Յնօր. 4. Ուրբ. կէտրէն ետքը մինչև Յնօր. 20, Կիրակի:

Դաւթի Մարգարէի և Յակոբայ Առաքելոյն տօներ տօնն և Երուսաղէմի Առաքելական Աթոռոյն հաստատութեան, որու առաջին եղիսկոսն եղած է Յակոբոս Տեսա՞նեկարար Ազգայնապետ իրաւունքները, Երուսաղէմի հրեայք-բրիտանացի եկեղեցւոյն սիւներէն մին:

Յնօր. 4, Ուրբ. երեկոյն Ս. Պատրիարք Հայրը Հաւատարմութիւն մտաւ Սրբոց Յակոբեանց Տաճարը և Նախագահեց Նախատեսակին, որմէ յետոյ թափօրով եղաւ Պատրիարքարան, ուր մեծարանքներ եղան Միաբանութեան Հետեւալ

առաջ կատարուեցաւ Տօնը, օրուան Պատարագին ու Քարոզին էր Տ. Եղիշէ Եպ. Զիւնկիրեան: Ս. Պատրիարք Հայրը, ըստ սովորութեան, Փառք ի բարձունքն մինչև Ար ընտեցեալ ազգայն յանգալս կեցաւ Առաքելական Աթոռին մէջ: Եկեղեցւոյ աւարտումէն ետքը Ս. Պատրիարք Հայրը դարձեալ թափօրով առաջնորդուեցաւ Պատրիարքարան, բարեմաղթութիւններ եղան Ս. Աթոռի հաստատութեան և Ս. Պատրիարքի արեւադարձական համար, և դարձեալ մեծարուեցաւ Միաբանութիւնը:

Ստեփանոսի Տօնը կատարուեցաւ Յնօր. 7 ի առաւել: Ստեփանոսի տօնին, Ս. Յակոբի մէջ, ժամերգութեան վարիչներն են Սարկաւագները: Անոնք օրեր յառաջ ժողով մը կը կազմեն, եկեղեցւոյ մէջ Սարկաւագաց յատուկ բոլոր գործերը կ'օրոյն յետ իրենցմէ ամէն մէկը ո՛ր գործը եւ պաշտօնը պիտի կատարէ նախատեսակի և տօնի ընթացքին: Ստեփանոսի տօնին, Լուսարարագիտ և Դպրագետ, ժամերգութեան վերաբերեալ ամէն կարգադրութիւն կը թողուն Սարկաւագաց, ըստ վաղեմի սովորութեան: Սարկաւագները օրուան մարդիկն են Ս. Ստեփանոսի տօնին: Եւ պէտք է արձանագրել որ մեր Սարկաւագունք ամէն ջանք ըրին իրենց պարտականութիւնները լաւագոյն կատարելու և արտայայտելու համար իրենց զգացումները:

Այս տարի 13 էր սարկաւագներուն թիւը. ութը Կիւլպէնեան, չորսը Միլլոնեան գաւառներէն, մէկն ալ Միաբանութենէն: Ամէնքն ալ, պատմութեան տեսքով և պաշտօնական սարկաւագի զգեստով, Փառք ի բարձունքն ներկայացան Ս. Պատրիարքին, Ս. Ստեփանոսի մատարն առջև, Ս. Յակոբի Տաճարին հիւսիսային կողմէն Պատարագիչն էր Յոնուպի Հայր Բարթոլոմէոս Թաւաճեան, իսկ Քարոզիչը՝ Բարդէն Սրբազան, որ պատկերացուց Ս. Ստեփանոսի կեանքը, շնորհքով, իմաստութեամբ և զօրութեամբ օտարաստեալ կեանքը, և յորդորեց Սարկաւագներն ու Դպիրները Ստեփանոսի պէս ծառայել Աւետարանի գաղտնի:

Յնօր. 10, ԵՆ. կատարուեցաւ Որդւոց Որոտման Տօնը: Զերեղեան եղբայրներէն Յակոբոսի յիշատակին կառուցուած է Ս. Յակոբայ Տաճարը, որու հիւսիսային պատին մէջ է շինուած Կիսագիր Մատուռը, ըստ Նախատեսակին: Հետեւալ Որդւոց Որոտման Տօնը ո՛չ միայն զարագարձն է Ս. Յակոբի Տաճարին հաստատութեան, այլև տօնը անժողովաւ եկեղեցւոյն Հայ Պատրիարքութեան, այդ է պատճառը որ Պատրիարքն է օրուան հանդիսադիրն ու պատարագիչը: Ս. Պատրիարք Հայրը, որ այս տօնին հանդիսադիրն էր, Նախատեսակին Հաւատարմութիւն իշաւ Ս. Յակոբ և թափօրով եղաւ Պատրիարքարան: Իսկ հետեւալ օրը Ս. Պատարագ մատուց և իմաստալից քարոզ մը տուաւ, որուն ամփոփումը պիտի կարգան մեր ընթերցողներ Սիմէի այս Թիւին սկիզբը, Կրօնական բաժնին մէջ:

Պօղոս-Պետրոսի տօնը մասնաւոր հանդիսաւոր



թիւն մը չունին Ս. Աթոռի մէջ, միայն այդ օր Ս. Պատարագը կը մատուցուի վերնախորաններուն մէջ: Դպիրք վարը, Ս. Յակոբայ Տաճարին մէջ կը կենան: Իսկ Պատարագիչը և Սարկաւագունքը վերը Աւագ Սեղանի երկու կողմը, Ս. Կարապետի և Ս. Աստուածածնի սեղաններուն վերայ շինուած են Ս. Պօղոսի և Ս. Պետրոսի անուններուն նուիրուած խորանները:

Ամանորն ալ Ս. Աթոռի մէջ հանդէսի օր մըն է: Հին տարւոյն վերջին օրը, երեկոյեան ժամերգութենէն ետքը, Միարանութիւնը Պատարարքարան կ'իջէ՝ նոր Տարին չնորհաւորելու Ս. Պատրիարքին, համրուելով ն. Ամեն. Որբագնութեան աջը, արմէ կ'ընդունին մէյ մէկ Օրացոյց նոր տարւաւն: Հետեւալ օր Ս. Պատարագ կը մատուցուի. պատարագիչն է Ս. Յակոբին ժամօրհնոյ վարդապետը, որ էք Հայր Վրժմանէն Կատարեալ:

Յունիսար 14, ԲՇ. առաւ, Ս. Պատարագի աւարտումէն ետքը Միարանութիւնը թափօրով Պատրիարքարան ելաւ, ըստ սովորութեան, Ժառանգաւորաց ասներ, երկսեռ Դախաղթարանի և Մանկապարտէզի փոքրիկներ, Պատրիարքական Դիւանի պաշտօնէութիւնը, Ժողովուրդը լեցուած էին ընդարձակ զահլիճը: Ս. Պատրիարք Հայրը բազմած էր զահլիճին խորքը, շուրջը եպիսկոպոսներ և վարդապետներ:

Ամենէն յառաջ, Ս. Աթոռի Լուսարարացեալ և Տնօրէն Ժողովոյ Ասենապետ Դեր. Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան, յանուն Միարանութեան, կարգաց խնամքով պատրաստուած ուղերձ մը, զոր նշխարութեամբ կը գնենք ստորի իւր շահեկանութեան համար:

Յետոյ կ'ըլլէինեան զատարանէն Հայի Սարկաւագ, յանուն Սարկաւագայ, իսկ Ժառանգաւորաց վարժարանի Դրդ. զատարանէն Դպիր Սահման Սահման՝ յանուն Ժառանգաւորներուն մէյ մէկ սիրուն, զգայուն ուղերձներ կարգացին: Ասոնց յաջորդեց Մանկապարտէզի կողմէն փոքրիկն Արամ Եպիսկոպոս շատ հաճելի մանկական ուղերձը, զոր լուրջ և համարձակ շնչով մը արտասանել է ետքը՝ ծագկեփունջ մը նուիրեց Ս. Պատրիարքին: Բոլոր ուղերձներուն սկիզբն ու վերջը Ժառանգաւորք երգեր երգեցին, երգեցին նաև Մանկապարտէզի փոքրիկներ:

Ամենէն ետքը խօսեցաւ Ս. Պատրիարք Հայրը և ակնարկելով Մեսրոպ Որբագանի ուղերձին, ըսաւ. «Թէն սովորութիւն եղած է այդպէս գործակցութեամբ կատարուած գործերը զրել Մեծաւորի հաշուին, բայց պէտք է գիտնալ թէ ի՞նչ որ եղած է այս հաստատութեան մէջ և այս հաստատութեան անունով, եղած է գործակիցներով: Շնորհակալութիւն յայտնեց չնորհաւորական մաղթանքներու փոխարէն, օրհնեց Ս. Աթոռին բոլոր աշխատողները և հաստատութիւնը, և Պանդանիլով ու միժմայն Հայր մեծով փափուցեց հանդէսը: Յետոյ բոլոր ներկայք մօտեցան Ս. Պատրիարքին աջը համբուրելու և ստացան մէկ մէկ պատուական նարինջ, երկրորդ պարտէզին բերքը:

## ՄԵՍՐՈՊ ՍՐԵԱԶԱՆԻՆ ՈՒՂԵՐԶԸ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,

Սուրբ Յակոբեանց Միարանութիւնը բախան ունի Ձեր գա՛նակալութենէն ի վեր այս ութերորդ նոր Տարին ողջունելու:

Ամէնքս առհասարակ կը խոյսանք ուրախութեամբ՝ տեսնելուս համար Ձեր Ամենապատուութիւնը յաջողք ու կայտառ, ու աշխատելու և զործելու իւր բովանդակ ուժին ու կորովին մէջ, և նրաւորտ ենք ունենալուս համար Ձեզ նման քաղաւպիտի միջոցով ու անգագական արժանիքներով օտարուած ամենապատուական Հայրապետ մը, որ ինչ զահակալութեան առաջին օրէն ի յայտ բերաւ հարազատ հօր մը բարի սիրտը, արթուն զեկավարի մը խոհական իմաստութիւնը ու գերնախոր զատարանութիւնը մը բարձր կարողութիւնը, որով տարուէ տարի բարձրացաւ Սուրբ Աթոռի յարգն ու վարկը թէ՛ յայն ազգայնոց և թէ՛ յայն Հոգատար Կառավարութեան ու օտարներու՝ և տիպար ու բարեհամբաւ հաստատութեան մը վերածուելու ճամբուն մէջ մտաւ այն:

Միարանութիւն, Սրբազան Հայր, բոլոր սրտով մաղթէ ու կը ցանկայ երջանիկ պատեհութիւնն ունենալ շատուշատ նոր տարիներ ողջունելու Ձեր Ամենապատուութիւնը՝ Սրբոց Յակոբեանց Գահին վերայ, որպէսզի հնարաւորութիւն ու միջոց ունենար ի կատար ածելու Ձեր բարի բարի իղծերն ու նպատակները, ու Առաքելական Աթոռը դնելու ամուր ու ապահով հիմքու վրայ, աւելով անոր բարգաւաճ ու զարգացում վիճակ մը բարոյապէս ու նիւթապէս:

Եւ արդէն այդ ուղղութեամբ աշխատանքներ կատարուած են ու կատարուելու վրայ են տակաւին, որոնց մէկ քանիները այս հանդիպաւոր առթիւ թուել անպատեհ չեմ համարիր: 1927-ի ամբան պատահած երկրաշարժի աղէտը թէն պահ մը սահմակեցուց ամէնքս, իսկ գոհութիւն Տեառն, միասնեք մեծագոյն մասամբ զարմաւուցան հետզհետէ, ու նախկինէն լաւագոյն վիճակներու վերածուցան Բեթղի-նէի մի վանքն ու եկեղեցին, Պաղէթաղը, Վանքին հիւանդանոցը և վնասուած ուրիշ կարգ մը թաղեր ու յարկարամիներն ու Վանքէն դուրս գտնուած բաւական թուով աթոռապատկան շէնքեր: Ասոնց վրայ աւելցան նոր շինութիւններ ալ, ինչպէս Պարանալիի ամառանոցը, և իբրեւ հասութիւններ կալուածներ՝ Յովսէփ վանքին յարակից ու Մեծ արտան մէջի նորակառուց մեծ տունները: Տարւոյս ընթացքին Սուրբ Աթոռը ճոխացաւ նաև առանձին երեսարական լոյսով, որ Միարանութեան ու Վարժարանին մեծ դիւրութիւն ու յարմարութիւն ընծայել գատ, շէնցուց ու պայծառացուց նաև Ս. Աթոռը:

Այս ամենուն պատկը և Ձեր Ամենապատուութեան ամունին փառքը կազմող հաստատութիւնը պիտի բլրայ քաղաքիս Ազգային երկսեռ Դախաղթարանի և Մանկապարտէզի նոր և հոյակապ շէնքը, որ թէն բաւականին ծանր նստաւ, բայց Ս. Քաղաքիս մէջ ըստ ամենայնի ազգին պատիւ բերող հաստատութիւն մը եղաւ անկիւս, և նկատելով թէ



ազգային մանկաւոյն համար անհրաժեշտութիւն մըն էր այդ վարժարանը, Սուրբ Աթոռը չընկրկեցաւ ոչ մէկ նկիւթական գահողութեան առջեւ, ու Աստուծով մօտ ժամանակէն անոր պաշտօնական բացումը սեւանելու առիթն ալ պիտի ունենանք Ձեր բարձր հովանաւորութեամբ եւ օրհնութեամբ:

Կարելի չէ զանց ընել թէ այս ամէն աշխատութեանց մէջ Ձեր նախագահութեան տակ գործող Սուրբ Աթոռի վարչութիւնը եւ Միաբանութեան անդամները ըստ աստիճանի եւ ըստ կարողութեան միարան ու համկրաշխ գործունէութեամբ աշակցեցան Ձեր Բարձր Սրբազնութեան: Մասնաւորապէս առանձին գնահատութեան եւ շնորհակալութեան արժանի է Կերաշնորժ Տէր Մատթէոս Սրբազան Եղբոր այս մարգին մէջ նուիրած եռանդուն ջանքն ու հոգածութիւնը:

Անկողը կրկնութիւն մը պիտի բլլար վերստին յիշել՝ զրեթէ երեք բաւարդ դարէ ի վեր Ազգը մտահոգող ու Միաբանութիւնը տառապեցնող հարկուեալն զատին ի նպաստ Սուրբ Աթոռին քարոյացող վերջաւորութիւնը: Այս մասին արդէն անցեալ օր արտայայտութիւններ եղան ըստ արժանւոյն:

Գալով նկիւթական վիճակին, չնայելով որ տոկոսաւոր պարտքի պատկառելի գումարի մը տակ ջրնշուած է սակաւին Սուրբ Աթոռը, րայց անոր վարին ու պատիւը ա՛նքրան մեծ է հրապարակի վրայ, որ Երեսուղէմի մէջ ամենէն վստահելի ու ամենէն ապահով տունը նկատուած է այն: Հիմա երբ այլեւս վերջ գտան մեծ դատերը ու դարմանուեցան երկրաշարժէն յառաջացած վնասները, որոնք չտախտեալուած ծախսերու դուռ բացին, մեծ յոյս ունինք՝ որ պարսնն ալ աստիճանաբար պիտի նուազի ու խնայողական միջոցներու կիրառութեամբ կամաց կամաց հաւասարակշիռ ու ինքնաբաւ վիճակ մը պիտի ունենայ Սուրբ Աթոռը:

Յիշատակութեան արժանի է նաեւ որ տարւոյս ընթացքին Միաբանութիւնը բախան ունեցաւ կարգ մը տարիաւորներ եւս առեցած տեսնել իր շարքին վրայ, որոնք իրենց աստիճանակից երէց եղբայրներուն հետ երեքատասնեակ մը նոր ու թարմ ուժեր աւելցուցին Սուրբ Աթոռին: Անոնք թէեւ տակաւին ուսանող երիտասարդներ, բայց տարակոյս չկայ թէ Սուրբ Ռաֆայի նուիրեալ անդամներն ըլլալու խորունկ գիտակցութեամբ՝ սրտովին փարած են իրենց հոգեւոր կոչումին, ու իրենց մեծ վարդապետին հովանիին տակ ու Անոր շունչով սնած ու զարգացած, այժմէն կը սրտաբաւուն ըլլալու այս Աթոռին բոլորաշուք, սիրացաւ ու գործունեայ միաբանները, Անոր կենսական շահերուն ու բարի համբաւին նախանձանդորութեամբ եւ նախնեաց խնկիկ յիշատակներուն եւ Սուրբ Տեղեաց ազգային իրաւունքներուն սիրովը լիցուած:

Նայեալս տարւոյս մէջ քահանայական սուրբ օժուած ստացան չորս միաբանակից նորընծայ եղբայրներ, որոնցմէ երկուրր, Ձեր Ամենապատուական շնորհի ու հոգածութեամբ, այժմ կ'ուսանին Անգլիոյ մէջ, ու կը պատրաստուին իրենց բաւարար ուժերը ի սպաս դնելու ազգային այս պանծալի Հառ-

տառութեան: Ասիկա Սուրբ Աթոռի տարեգրութեանց մէջ գրեթէ աննախընթաց երեւոյթ մըն է, զոր կարելի չէ անյիշատակ թողուլ:

Կրթական գործին զուգընթաց Սուրբ Աթոռը կը շարունակէ իր գրական գործունէութիւնը, զոր ըսկրած է քանի մը տարիներէ ի վեր: Տպարանը իր տարր գործաւորներով կ'աշխատի անընդհատ, մասնաւոր կը գտնայ առանց զաղար առնելու ու զբաշարները ատուարջիջներուն առջեւ մեղուներու նման կ'աշխատին յարատեւ: Այս գործունէութեան իրրեւարդներ վերջին երեքուկէս տարուան ընթացքին Սուրբ Աթոռի Տպարանը յոյս ընծայեց քանքմէկ մեծ ու փոքր հատորներ, որոնց երեքը մասնաւոր տակ են տակաւին: Այդ հրատարակութեանց մէջ աչքառու տեղ մը կը բռնեն Ձեր Ամենապատուական այնքան փնտրուած Հայերէն լեզուի գտաւիրները եւ հանդուցեալ երջանկայլշատակ Տ. Մարգարիտ Օրմանեան Սրբազանի Ազգապատումը:

Դրական գործունէութեան կարգին՝ այս երբորդ տարին է որ կը շարունակուի Սիմեոն, որուն աւելի քան կէս դարէ ի վեր մարած ցրազը վառեցիր, Սրբազան Հայր, եւ որ կը հրատարակուի Ձեր բազմամեաւ ու պատուարիք աշխատակցութեամբ եւ Գեորշնորժ Տէր Բարգէն Սրբազան Եղբոր փորձ ու քննողն խմբագրապետութեամբ: Սիմեոն իր կրօնարարայական ու քանասիրական բուրժ բովանդակութիւնով զգալի պակաս մը կը լիցնէ այսօր, ու կը խօսի աշխարհի չորս հովերուն ջրուած Հայութեան սիրտին ու հոգիին, Սուրբ Սիսիի վառարանէն արձակելով հոգեւոր միութեամբ եւս ու փութամբիւ անուշ ցոլքեր:

Այս ամէն պարագաները զոր յիշատակեցի, Ամենապատիւ Սրբազան Հայր, անպատում հրճուանքով ու երախտագիտութեամբ կը լիցնեն մեր սիրտերը, ու կը համարինք զանոնք իրրեւ Ձեր կողմէ, Նոր Տարիի արժէքաւոր կաղանջէքներ Ձեր գաւակներուն ծօնուած:

Որդիական ակնածութեամբ կրկին կը շնորհաւորենք ուրեմն թանկագին ու ամենապատուական Հօրդ Նոր Տարին, ու չերմագին մաղթանքներ կը վերադրենք Ձեր առողջութեան եւ արեւշատութեան համար, ոյն ակնկալութեամբ թէ յառաջիկային ալ նորանոր կաղանջէքներով պիտի օծուէ մեզ եւ պիտի բախտաւորեցնէք ու պիտի մխիթարէք ամէնքս:

Այս 1929 տարին պատմական թուական մըն է Սուրբ Աթոռիս համար, փառեցի Ձեր հոգեւոր որդիները, հեռուէն թէ մօտէն, բախար պիտի ունենան տօնելու ամենասիրելի Հօրդ ու Հայրապետիդ եւ մեծամուն Ռատեցապետիդ քահանայութեան եւ զբաղան ու կրթական գործունէութեան Յիսնամեայ Յոբելանը: Կը մաղթենք որ նախախնամաբող ողջամը հասցնէ մեզ այդ բաղձալի եւ կրօնելի օրտան:

Կը մաղթենք զարժեալ որ Բարձրեայն Աստուած Հայաստանեայց Ս. Եկեղեցին իր Նուիրապետութեամբ, Հայ ազգն իր Հայրենիքով ու Առաքելական Սուրբ Աթոռս իր արժանընտիր եւ սրբազնագոյն Գահակալով եւ բարեջան ու անձուէր Միաբանութեամբ անփորձ ու անասան պահէ միշտ ու յաւիտեան:



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ

26 Դեկտ. 1928, ԴՇ. — Եւրոպացւոց ինքնդեան Տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր հետեւորդներով շնորհաւորական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Լաւանաց Ս. Պատրիարքին, Ֆրանչիսկեանց Վանքը, եւ Անկիւրան Եպիսկոպոս Տ. Մէկ-Ինէս Սրբազանին:

Եռյն օրը, միեւնոյն առիթով, Պատր. Փոխանորդ Դեր. Տ. Մկրտիչ Սրբազան, մի բանի հոգեւորականներու ընկերակցութեամբ, շնորհաւորական այցելութիւն տուաւ Դերման եւ Յոյն Կաթողիկոսականութեան մեծաւորներուն:

1 Յունուար 1929 ԴՇ. — Եւրոպական Նոր Տարւոյ առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, իր հետ ունենալով Դիւանապետ Տիար Կ. Նուրեանը, կէսօրէն առաջ ժամը 10-ին շնորհաւորական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Կառավարիչ Վսեմ. Մր. Քիթ-Բօչին:

8 Յունուար 1929, ԴՇ. — Յունաց Ս. Իննդեան Տօնին առթիւ, Պատր. Փոխանորդ Տ. Մկրտիչ Սրբազան, ընկերակցութեամբ վարդապետաց, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց Պատրիարքարանին, ինչպէս նաեւ Հապէշներու, Ղպսիներու եւ Ասորւոց վանքերուն:

14 Յունուար 1929, ԲՇ. ԿԱՂԱՆԴ. — Մեր Նոր Տարին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընդունեցաւ շնորհաւորական այցելութիւնները Երուսաղէմի Կառավարիչ Վսեմ. Մր. Քիթ-Բօչի, Քաղաքապետ Բաղդալ Պէշի, Երուսաղէմի Միւլֆիթի Էֆէնտիին, Դերմանական եւ Ռումանական Հիւպատոսներուն, եւ ուրիշ անձնաւորութեանց: Միւս հիւպատոսները այցաբարտ ձգած էին:

15 Յունուար 1929, ԴՇ. — Պաղեստինի Նորընտիր Բարձր Դոմիսէր Դ. Վ. Սըր ձօն Բօպէրթ Զէնսըրը այցելեց Ս. Յարութեան Տաճարը: Կատարուած ընդունելութեան մասնակցեցան Ս. Յարութեան Հայ Միարանութիւնը եւ Դիւանապետ Տիար Կարապետ Նուրեան:

Նորին Վսեմութիւնը երբ հասաւ Ս. Յարութեան, Պատանաւորեալն առջեւ ընդունուեցաւ Հայոց, Յունաց եւ Լատինաց կողմէն: Ֆրանչիսկեանց Մեծաւորը անձամբ եկած էր, զիմնալով որ Բարձր Դոմիսէրը դաւանակից է իրեն: Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչը, Մր. Քիթ-Բօչ Դ. Վ. Բարձր Դոմիսէրին ներկայացուց երեք յարանաւանութեանց հոգեւորականները, որոնց ձեռքերը թօթուց եւ յետոյ առնոց հետ այցելեց Ս. Դերեզմանին, Յովսէփ Արիմաթիացոյն մատրան, Դիւս Խաչի Ալքին, Դողդոթային, եւ այցելութիւնը աւարտելէն ետքը շնորհակալութեամբ մնաք բարով բոստ հոգեւորականներուն, եւ ինքն ուղղուեցաւ զէպի Յունաց եկեղեցին, ատոր զանձարանը տեսնելու համար:

## Ն. Վ. ԲԱՐՁՐ ԲՈՄԵՍԷՐ Ի Ս. ՅԱՆՈՐ

16 Յունուար 1929, ԴՇ. — Եւրոպայէն եղած ժամայրութեան համաժայն, Պաղեստինի Նորընտիր Բարձր Դոմիսէր Դ. Վ. Սըր ձօն Բօպէրթ Զէնսըրը, ընկերակցութեամբ իր Տիկնոջ եւ Պաղեստինի Կառավարութեան Ընդհանուր Քարտուղար Մր. Ալուրի, Տիկին Լիւրի, Բարձր Դոմիսէրութեան Թիկնապահին, եւ մի բանի բարձրաստիճան հիւրերու, իր առաջին այցելութեամբ պատուեց Ս. Յակոբայ Վանքը: Առաջ Դռնէն ընդունուեցաւ Թարգման Տ. Տրդատ Վարդապետի, Դիւանապետ Տիար Կ. Նուրեանի եւ Միարանութեան Հոգեւորական անդամաց կողմանէ, եւ պատշաճ ճրով առաջնորդուեցաւ ուղղակի Ս. Յակոբայ Տաճարը, ուր ընդունուեցաւ Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազանի կողմէ: Տաճարին զանազան մասերը տեսնելէ, եւ հնութիւնները հետաքրքրութեամբ դիտելէ յետոյ, Նորին Վսեմութիւնն ու հետեւորդները միեւնոյն հանդիսութեամբ առաջնորդուեցան Պատրիարքարան: Դահլիճին դրան առջեւ ընդունուեցան Ս. Պատրիարք Հօր եւ Եպիսկոպոսաց կողմէն: Այս առթիւ թլխանդանով մեծաւորուեցան Դ. Վսեմութիւնն ու հետեւորդները, Ս. Պատրիարք Հօր աշխատութեան բազմամատան սենեակը դիտելէ եւ հիւրերու յատուկ տամարին մէջ իրենց անունները արձանագրելէ ետքը, երեկոյեան ժամը 4.30ին մեկնեցան, յայտնելով իրենց հիացումն ու գնահատանքը Հայոց Պատրիարքարանին համար:

18 Յունուար 1929, ՈՒԲԱԹ. — Ճրագալոյց Ս. Իննդեան, ժամը 9.30ին Ս. Պատրիարք Հայրը եւ Միարանութիւնը օթօնելու թափօրով եւ հեծեալ ոստիկաններու առաջնորդութեամբ մեկնեցան Բեթղեհէմ, մեր Ս. Իննդեան ճրագալոյցի տօնախմբութեան առթիւ: Պաշտօնական մուտքը եւ Հրաշափառ տեղի ունեցան Դ. Ամինապատուութեան նախագահութեամբ: Ս. Պատրիարք Հայրը Հրաշափառ եւ ուխտը կատարելէ ետքը վերադարձաւ Ս. Յակոբ Դիշերային Ս. Պատարագը մատոյց եւ Զրօրճնէրի կարգը կատարեց Լուսարարապետ Տ. Մեսրոպ Սրբազան եւ քարոզեց: Հետեւեալ օրը, Միարանութիւնը միեւնոյն պաշտօնական թափօրով առաւան ժամը 9ին, վերադարձաւ Երուսաղէմ:

20 Յունուար 1929, ԿԻԲ. — Սրբազան Պատրիարք Հայրը, Ս. Իննդեան Տօնին առթիւ ընդունեցաւ Լատինաց Պատրիարքարանի, Ֆրանչիսկեանց, Ղպսի եւ Ասորի վանքերու Տեսուչներուն եւ Միարանութեանց շնորհաւորական այցելութիւնները:

21 Յունուար 1929, ԲՇ. — Յունաց Պատր. Փոխանորդը իր հետեւորդներով, Հապէշ Վանքի Տեսուչը, Անկիւրան Եպս. Մէկ-Ինէս Սրբազան, եւ Ռուսաց Եպս. Տ. Անաստաս՝ շնորհաւորական այցելութեան եկան Ս. Պատրիարքին:



**Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔ. ԱՐՇԱՐՈՒՆԻ**  
1851 — 1929 ՅՈՎ. 21. ԲԵ.

**Տ. ԵՂԻՇԷ ԵՊՍ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ**  
1863 — 1929 ՓԵՄԲ. 7. ԵՇ.

1929 Փետր. 3 Կիրակի, ըստ կաղապարեան Ս. Պատրիարք Զոր, Հոգեմանգեստան պաշտօն կատարեցաւ Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ, Ս. Պատարազի առաջնորդին ետք, Կ. Պալսի նախկին պատրիարքներէն Արշարունի Յովնանէն Ս. Արեւելոյ յիշատակին, Կ. Ամեն. Սրբազնութեան նախագահութեամբ, Այս առթիւ, պատարազի ընթացքին, **Հայր մեր** յառաջ, Բարգէն Սրբազան խոնքաւ ժողովուրդին, ներկայացնելով Արշարունի Սրբազանին կեանքն ու գործունէութիւնը, իբրեւ առաջնորդ, եւ բարեմաղորութիւններ քաւ Ս. Պատրիարք Զոր առողջ առեւտարութեան համար, որ բանաճաղակիցն է հանգուցեալ Սրբազանին:

Արշարունի Սրբազանով կ'աննեսանայ Կ. Պալսի նայ էկեղեցականութեան ամենէն ինքնասպան ու արեւելոյ: Հանգուցեալը, որ հազիւ կար 75 տարեկան, գործունէ կեանքի մէջ մտաւ Պետապի առաջնորդութեամբ, զոր վարեց Ս. Արտուդս միաբան եւ այժմ Ֆելզմայի հոգեւոր նովի Տ. Վարդան Ի. Վ. Գառնաբեանի գործունէաց վիճակներէն: Մեծ յարգանք կը վայելէր տեղական կառավարութեան առջեւ իբրեւ **տէրիւ** մտղ, եւ ինքն օգտուելով այդ հանգամանքէն, շատ լավագոյն կ'ընէր իր գիտելութիւնները **Մեղիսի Իստաբէ** մէջ եւ կը պատշաճօրէն խնդիրներ: Իր ջղապար վիճակը արգելք մըն էր տալու գործունէութեան եւ միջառնական աշխատութեան: Մեղիսի երես չէր կրնար հաշիւ: Առտուածարանութեան մէջ տարօրինակ կարծիքներ կը յայտնուէին, մարդկութեան խորհրդակցութիւն մէջ, զոր օրինակ, Յուլիանեանց պէս կը մտածէր: Գեղարուեստի մէջ սիրամար էր արեւելեան երաժշտութեան, երաժշտական իր ջիգերը ոտ կը համարէր: Ինչպէս զօրէն մամբանէր էր. միւս կողմէն, գրեթէ անգիտակցաբար կը բնէր իր աչն ու ձախը: Գիրքեր կը գնէր եւ չէր կրնար կարդալ: այնքան ջղային էր, շատ ատ **նեղ** ինքնութեամբ ունէր, եւ իր եղբայր օրինակ մեր ընդ մեր կը ճնշեցներ, եւ մեկտի կը նետէր զայն, եր կը տեսնէր որ իր քրոնները այլեւս չէին պատկեր գործիքին տալու պէտք եղած շունչն ու ոգին: Արշարունի Սրբազան իր յիշմանայ բանականութեան ընթացքին բարձրացաւ մինչեւ Կ. Պալսի պատրիարքական արդու, առանց նրանակելի նետք մը ձգելու հոն, եւ իր մտնէն ետք կը բողբու բարի եւ անբողբու եկեղեցականի մը յիշատակը միայն:

**Կենսագրական գիծեր**

Արշարունի Սրբազան, առաջանի անունով՝ Մինրամ Մելյանեանէն, ծնած է Թովուպար, Կ. Պոլիս, 1854ին, Քնյ-Վեդ. ձեռն. 1879, Եպս.՝ 1899ին. Առաջնորդ Պետապի 1893 — 1911., Պատր. Կ. Պալսի 1911 — 1913. վիճն. 1929 Յնվր. 21 ԲԵ. երեկոյ՝ ժամը 6, 30. Իով. Յնվր. 25 Ուրբ. Շիւրի Հայոց գեղեցիկմանս մէջ, աւրընթեր Օրմանեան Սրբազանի դամբանին:

Ս. Արշարունի բաղձալատաւ Միաբան Տ. Եղիշէ Եպս. Զիլինկիրեան ի Տէր հանդեսաւ 1929 Փետր. 7 եւ. Կէսօրէն ժամ մը յառաջ:

Եկեղեցւոյ կարգը կատարուեցաւ Փետր. 8, Ուրբ. առտու Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ: Ս. Պատարազը մատոյց հանդուցեալէն ձեռնադրուած Հ. Գարեգին Պիւղլիպեան, Օձուսը կատարեց Պարգէն. Փոխանորդ Գեր. Միքայիլ Եպս. Արշարունի, որ զրուստալից դամբանականով մը պատկերացուց Եղիշէ Սրբազանին պանական ծառայութիւնները Ս. Աթոռին, իր միաբանական յիշմանայ կեանքին մէջ, եւ Հայ ժողովուրդին՝ իբրեւ Առաջնորդ Բաղէշի, փափուկ ժամանակներու մէջ: Թաղման կարգը սկսեալ ժամը 10 ին, հաւաքագնութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զոր, Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ, իսկ յուզարկաւորութեան հաւաքանց լուսարարարպետ Միքայիլ Սրբազան: Թեթիւ անձրեւ մը կը տեղար երբ Թափարը դուրս ելաւ վանքի Աւագ դռնէն, բայց յետոյ պայծառ արեւին տակ հողին յանձնուեցաւ հանգուցեալը, Ս. Փրկիչ վանքին գերեզմանատունը, Միաբան եպիսկոպոսներու յատուկ քառանին մէջ. արեւմտեան հիւսիսային գիծին վրայ: Իր օձման եւ Թաղման ներկայ գտնուեցան Յոյն եւ Ասորի եկեղեցականներ, եւ Հ. Զ. Պրիմալէ՝ Երուսաղէմի Անկիլքան Եպս. Մէկլինէս Սրբազանի կողմէն: Յոյն եկեղեցականներ գերեզմանատան մէջ Հոգեհանգստեան պաշտօն կատարեցին, զազաղը հող իջեցնելէ յառաջ:

Եղիշէ Եպս. Զիլինկիրեան, ինչպէս պիտի տեսնուի վարը դրուած կենսագրական գիծերէն, գործունէայ հոգեւորական մը եղած է: Ս. Աթոռի վերաբերեալ ծառայութիւններէն դուրս, նրանակելի է իր Առաջնորդութիւնը Բաղէշի թեմին մէջ՝ այնքան փափուկ ժամանակներու մէջ, երբ բանտարկուեցաւ Միշոյ մէջ Տարօնի վիճակին Առաջնորդական Տեղապահ Բարգէն Վարդապետի հետ: Գիտէր թիւրքերու հետ վարուելու կերպը, երկարաբան էր իր խօսակցութեան մէջ, իր գործերուն ամէնէն յետին մանրամասնութիւններն ալ կը յիշէր եւ սակայ կ'անդրադառնար առողջ վրայ:

Վանքի մէջ, քաջուած միաբանական գործունէայ կեանքէն, հանգիստաւ առթիւներով միայն երեսն հուշար, եւ մեծ խնամք կը տանէր հրատարակելու իր յուշերը, թղթակցութիւնները, լրագրական տեղեկութիւնները եւ գրուածները: Երբ սեւ թերթի մէջ տեսնէր որ իր անունը յիշատակուած է առթիւով մը, անի-



կա թանկագին վաւերագիր մը կը դառնար իրեն համար: Այս մտայնութեամբ է որ կը քրքրէր իր կեանքին բոլոր յուշերը եւ կը հրատարակէր:

#### Նկնագրական Գիծեր

Եղիշէ Եղս. Զինկերեան բնիկ Խարբերդցի (Մէլքէ) է. ծնած է 1863, Զատիկ շարին. որդի Ատորնի եւ Վարդերի. աւագանի անունը՝ Յարութիւն: Իր նախնական ուսումը կ'առնէ Մէլքէի Աղղային Վարժարանին մէջ: 1879 Նոյմ. 15ին երեսուցեմ կուգայ, ժոնգրք. Վրժբն. և Տեսուչ Սահակ Վրդ. Խաղաղանի հետ, որ այդ տարին այցի գացած էր իր ծննդավայր Եղեգի գիւղը:— 1879-1882 կ'աշակերտի ժոնգրք. Վարժարանին եւ շրջանաւարտ կ'ըլլայ:— 1884 Յունիս 28, Սարկաւազ կը ձեռնադրուի Առաւածատուր Եպո. Տէր-Յովնանէսեանէ:— 1886 Սեպտ. 28ին Գնդ. կը ձեռնադրուի Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Գերեզմանին դուռը, Երեմիա Արքեպիսկոպոսէն եւ արեղայական վեղար կ'առնէ:— 1883-1887 Բարսուղար Պատրիարքարանի եւ Առնեւդպիր Միաբնական Ընդհ. Ժողովոյ:— 1887-1889 Տեսուչ Պէշուրի:— 1889 Գարունէն մինչև 1890 Յնվր. Առաւելի կեսարից Ս. Կարապետ վանքին մէջ:— 1890-1891 Տեսուչ Դամասկոսի:— 1892-1895 Աւագ Թարգման: 1897-1901 Առաջն. Տեղապահու Առաջնորդ Բաղէշի:— 1901-1905 Տեսուչ Ժոնգրք. Վարժարանի (\*) եւ Աւագ Թարգման, եւ Առնեւդպիր Միաբնական Ընդհ. Ժողովոյ:— 1905-1910 Ս. Աթոռի Պարքին. Բոխանորդ ի Կ. Պոլիս:— 1905 Սեպտ. Մայրաքաղ. Վարդապետի աստիճանը կ'առնէ Օրմանեան Մաղաքիա Պատրիարքին:— 1910 Փետր. 14. Եպո. կը ձեռնադրուի Իզմիրեան Մատթէոս Կաթողիկոսէ:— 1910—1914 Դարգաստայետ:— 1910—1917 Առնեւդպետ Միաբնական Ընդհ. Ժողովոյ:— 1916—1917 Սինդական, մինչև Սինդիկ տարագրումը Դամասկոս, որ կը վարէ Դամասկոսի Տեսուչութիւնը 14 ամիս, Խաչատուրեան Արիստակէս Վարդապետի վարձանումէն ետքը:— 1919-1921, Անգլիոյ կողմէն երեսուցեմի գրաւումէն ետքը Ս. Աթոռի մէջ կաղնուած Վարչական Ժողովին նախագահ երկու քուէկէս տարի:— 1921-1929, պահ մը սրանեկած, կը թողու երեսուցեմի եւ կ'անցնի Եղիպոսոս, անկից Իզմիր երթալու եւ հոն հաստատուելու նպատակով, բայց Իզմիրի անկումը թիւրքերու ձեռքին մէջ, կ'ստիպէ դիմաքն վերադառնալ երեսուցեմ. անկէ ի վեր մնացած է երեսուցեմ մինչև իր մահը 1929, Փետր. 7:

Եղիշէ Եղս. ընթերցող մըն էր, կը կարգար միայն ժամանակ անցընելու համար եւ կը կարդար միայն քանի մը զբարար գիրքեր. գիրք կայ որ քանի քանի անգամներ կարդացած էր: Թիւրքերէն կը խօսէր եւ կը քարոզէր երբեմն ալ. Զոանսերէն ալ կը խօսէր քիչ մը: Իր անունով եւ իր կողմէն հրատարակուած են բաւական գործեր, որոնց շատ կարեւորութիւն կ'ընծայէր

(\*) Այս տեսութեան ասէն է որ սկիզբ կուտայ Զամբաղի մայրի պուրակը:

ինքն, եւ կը նպաստէր աշխարհի գործերու ալ հրատարակութեան, որոնք կը զարգարուէին իր անունով եւ պատկերով:

Եղիշէ Եղս. վերջին ձեռնագրութիւնը կատարեց 1928 Հոկտ. 14, Վարագայ Խաչին, Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Գերեզմանին դուռը, որ ինքն ալ ձեռնագրուած էր— վերջին Պատարագը ըրաւ 1929 Յնվր. 5, Եր. Ս. Յակոբայ Տաճարին մէջ, Դատիկ Մարգարէի եւ Յակոբայ Առաքելոյ Տօնին. վերջին անգամ հիկեղեցի իջաւ Փետր. 3, Կիր. Արշարունի Սրբազանի հոգեհանգրտանն պաշտօնին առթիւ:

#### ԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յուշե եւ Կոթեր Ս. երեսուցեմէն, Պոլսէն, եւ Դամասկոսէն (Տպգր. Աղեմանգրաւ. 1923).— Եկարագրութիւն երեսուցեմի, Հալէպի եւ Դամասկոսի եւ այլն (Տպգր. 1925), ճոյնը յաւելալ եւ նստացեալ (Տպգր. Պէշուր, 1927):— Բիւսոս եւ Մոփսէս (Տպգր. Կ. Պոլիս, 1924):— Յիւսակներ Բաղէի Առաջնորդութեան, Սաղիմական, Աղեղական, Տեղեկարական եւ նամակներ 1926 (Բ. Տպգր. Աղեմանգրաւ, 1928 եւ հրատարակուած երեսուցեմ):— Արձանակ Աղղային Զանաւան Անցուղարներ. Ա. Հասո (Տպգր. Կ. Պոլիս, 1925, հրատարակուած երեսուցեմ):— Արձանակ Բ. (Տպգր. Պէշուր, 1927):— Վանականի Տարեգիրք. (Տպգր. Կ. Պոլիս 1928):— Յուշ եւ պատմութիւն պատմաւոր եւ անպատմ վիճակաւ, զանազան անձանց գրուած պատմագրերու եւ նամակներու. Ա. Հասո (Տպգր. Պէշուր 1928), (Բ. Հասոյ մամուլ տակ ի Պէշուր):— Փնջիկ բարոյական առածներու եւ յիւսակ անպատմութեան (Տպգր. երեսուցեմ 1928):

Ասանցմէ զաս սպարութեան ծախքը նոցանց է նաեւ հետեւեալ զիբերուն.

Յովսէփ Տէր-Վարդանեանի **Մարտի Զարդ** 1920ին եւ պատմ. հմտ. անհարկ մը իր անցեալին վրայ. (Տպգր. Հալէպ 1927) եւ **Ինքիլիկ-Այրանի Սպանդը 1916**ին (Տպգր. երեսուցեմ 1928):

Յակոբ Վարդապետեանի **Նոր կամ Դրեգորեան տոմարը եւ Հայոց Ս. Սիկեղեցին** (Տպգր. Կ. Պոլիս 1926):

Սիմոն Վարդապետեանի մասնաւոր գոհունակութեամբ կ'արձանագրէ թէ Գեոր. Տ. ՎԱՐԴԱՆ, Ե. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԱՆ, Զրեղոյի մէջ, Իսկ Պրն. ԱՌԱՔԵԼ, Բիւրիկեան, Ուստրի մէջ, անձնուէր ջանքերով եւ արդիւնաւորութեամբ կատարած են եւ կը կատարեն Սիմոն Դարձակաւութիւնը: